

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԵ. ՏԱՐԻ — 1931

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

ՄԻԻԹ-ՇՐԵՆՆ ԹԻԵՐՆՈՒԹԵՆՆ ԿՈՂՄԱՆԻ Ի ՎԻԵՆՆԱ

Օտարալեզու արեւելագէտներուն, յսմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանասիրական յօդուածներուն համառօտ մէկ ամփոփումը, միջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրումն է արեւն նշկրի համար՝ 1 տոնդրիմզ, կրամիսիկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,” VIENNE (Autriche), VII, Mechitharistengasse 4.

“HANDES AMSORYA”

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOGIE

XLV. JAHRGANG — 1931

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN - KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges 1 Pfund Sterling.

Unsere Adresse:

ՀԱՅԱ ՏԵՍՈՒ

ՀԱՅԵՐԷՆ ԱՐՄԱՏԵԱԿԱՆ ԲԱԹԱՐԱՆ

ԳՐԵՑ

Հ. ԱՃԱՌԵԱՆ

ՈՒՍՈՒՑԱԿԵՏ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՏՈՐ Գ.

ԵՐԵՎԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԳՈՎԵՏԻՊ 89ԱՐԵՆ

1931, մեծ 8<sup>o</sup>, էջը 1350:

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Խ. Ս. ՀԱՆՐԱԳԵՏՈՒԹԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 3-5

ՄԱՐՏ — ՄԱՅԻՍ

ԽԵ. ՏԱՐԻ 1931

ԵՂԻՉԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՒ ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՀՆՈՑ ՊԱՏԵՐՈՋՄԻՆ ԲՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՒՆ

(Շարունակութիւն):

6. ՀԱՆԳՈՅՑԸ

Այն պարագան, որ Ղազար Փարպեցի է գտած հրատարակի վրայ կարմիր վարդանի պատերազմներու մասին զբաւոր յիշատակարան եւ ստիպուած է բերանացի աւանդութեան՝ ահանատեսներու եւ ահանջալուրներու վկայութեանց զիմել, կ'արթնցնէր ինքնին կասկած մեր մէջ Եղիշէի ժամանակին, հետեւաբար նաեւ անոր ահանատես պատմադիր ըլլալու մասին: Միւս կողմանէ պատերազմներու շարժառիթներու եւ զէպրերու յաջորդութեան մէջ երկու հեղինակներու՝ Ղազարի եւ Եղիշէի շեղումները, նաեւ տարօրինակ համաձայնութիւնները յոռաջ բերած էին — ինչպէս նկատեցինք արդէն — բանասէրներէն ոմանց մէջ գարմանք եւ ապշութիւն: Այս կէտերէն թէ մին եւ թէ միւսը կը կարօտէին բացատրութեան. բայց յաջող լուսաբանութիւն չէին կարող նկատուիլ այն պատիպատ մեկնութիւնները, զորոնք կ'առաջարկէին Եղիշէի բարեկամները: Հանդոյցը չէր լուծուեր նաեւ այն հաստատութեամբ, թէ Եղիշէ կարգացած է Ղազարի Բ. Դրուագը. ընդհակառակն ստով աւելի կ'ամբապնդուէր. եթէ նմանութիւնները երկու հեղինակներու մէջ չափով մը կը դանկին բացատրութիւն, բայց ո՛չ շեղումները իրենց պատճառարանութիւնը, վասն զի կը ստանային գիտակցաբար շեղուելու նկարագիր: Գարագաշնանի նկատումն, թէ Եղիշէ աւելի վիպագիր է քան պատմագիր, կը նուազեցնէր միայն մատենագիրն արժէքը, առանց որ եւ է նոր լոյս մը ցորցնելու մթութեան մէջ: Եւ վերջա-

պէս ենթադրութիւնը, թէ Եղիշէ ունեցած ըլլայ աչքի առջեւ երրորդ աղբիւր մը, չէր կրնար նոյնպէս արդարացնել Ղազարի եւ Եղիշէի մէջ նկատուած հակասութիւնները: Մինչ մանր, աննշանակ կէտերու՝ ժողովին մասնակից եպիսկոպոսներու եւ նախարարներու, պատերազմներու մէջ միջամուխ իշխաններու անուանացանկերը, նոյն իսկ Աւարայրի առջեւ ինկած հերոսներու թիւն միաբան միակերպ կ'աւանդեն անոնք, կարեւորագոյն իրադարձութիւններու, ժամանակակից ներքին կեանքի եւ դրացի պետութիւններու քաղաքական եւ դիւանագիտական յարաբերութիւններու ներկայացումին մէջ կը խոտորին իրարմէ: Եւ որովհետեւ այս շեղումներու մէջ Ղազար համաձայն է ներքին պայմաններուն եւ արտաքին պատմութեան, իսկ Եղիշէ թէ միոյն եւ թէ միւսին մէջ ինքնակաց, տարակարծիք, պիտի համարէի անարդար, բոլոր անհամաձայնութիւնները բառնալ անձանօթ երրորդին շալակը եւ դատարարակ զանիկա իրեւ մոլորեցուցիչ: Նախորդ քննիչներու գլխաւոր սխալն այն եղած է, որ անոնք ահանարկուած դժուարութիւնները փորձած են հարթել մի միայն Ե. դարու պատմական աղբիւրներով. այս ինքն Եղիշէով Ղազարն եւ կամ ընդհակառակը: Չեն մերձեցած քննութեան տիեզերապատմական հայեցակէտով. չեն փորձած Ղազարն առանձին եւ Եղիշէն ուրոյն համեմատել արտաքին աղբիւրներու հետ եւ ըստ այնմ գնահատել մէկուս հաւատարմութիւնը եւ միւսին արժանահաւատութիւնը: Չեն եղած նաեւ աննախապաշար իրենց դատաստանին մէջ, կասկածելու թէ Եղիշէ իրօք վարդապետաց պատմութիւնը կը ներկայացնէ իւր էջերու մէջ: Այս կասկածը պէտք է սակայն արթնցնէին այն աղագակող անհամաձայնութիւնները, որոնք Ղազարի եւ Եղիշէի մէջ լսելի էին դարերէ ի վեր: Եւ կային

կարկառուն կռուաններ, որոնց վրայ յեցած կարելի էր խորանալ կամ բարձրանալ աստիճանաբար՝ հասնելու ստուգութեան:

Գլխաւոր կռուանները, որոնք յենարանը պիտի կազմէին այդ ելեւէջին համար, հետեւեալ կէտերը պիտի ըլլային.

ա. Յազկերտ Բ. ունէ՞ր այն նկարագրին եւ աշխարհաստեղծը, ինչպէս կը նկարագրուի արքայից արքայն Եղիշէի գրչին տակ:

բ. Ստուգիւ պատերազմասէ՞ր էր Յազկերտ. արշաւե՞ց բիւզանդական հողեր. թափե՞ց արիւն. աւերե՞ց երկիրներ. դարձա՞ւ աւարով:

գ. Այս արշաւանքը բերա՞ւ իր հետ խաղաղութեան դաշինք եւ Պարսկաստանէն Բիւզանդիոն փախստականներու վերադարձ:

դ. Յազկերտ Բ. ի օրով ուղարկուած է Դենչապուհ մը Հայաստան աշխարհապիր ընելու. տեղի ունեցա՞ծ է առ հասարակ Ե. դարուն մարգահամար եւ հարկերու դրութեան փոփոխում:

ե. Մըած է Յազկերտ պատերազմ Կոլկասեան ազգերու դէմ. եղա՞ծ է միջամուխ Քուշանաց երկիրը. դըրա՞ծ է փականք ձորայ պահակին:

զ. 451ի հայկական ապստամբութիւնը պատճառե՞ց մտահոգութիւն Պարսից արքունիքը, իբրեւ պատճառ յոյն-պարսկական խաղաղութեան լուծման: Կարո՞ղ էր Աւարայրի ճակատամարտը «Հայոց պատերազմ» անունն ընդունիլ:

Չեմ յիշեր այն մանր կէտերն, որոնք կարող էին նոյնպէս արթնցնել ուշադրութիւն:

7. ԼՈՒԾՈՒՄԸ

Ազատութեան պատերազմներ շատ է մղած հայ ժողովուրդը. մանաւանդ երբ զգացած է բռնարարուած խղճի ազատութիւնը, վտանգուած քրիստոնէութիւնն իւր սահմաններէն ներս: Յատկապէս երկու պատերազմ համբաւուած է իբրեւ այսպիսի, ա՛յն որ մղուած է Պարսից դէմ 451ին, Վարդան Մամիկոնեանի, Համազասպի որդւոյն սպարապետութեան տակ, եւ ա՛յն որ տեղի ունեցած է 572ին Վարդան Մամիկոնեանի՝ Վասակի որդւոյն սպարապետութեան տակ նոյնպէս Պարսից դէմ:

Առաջինը գտած է արձագանգ Հայոց

պատմութեան մէջ շնորհիւ Ղազար Փարպեցւոյ, որ ականատես վիաներու բերնէն քաղած գրի առած է մանրամասնօրէն ապրտամբութեան սկզբնաւորութիւնն, ընթացքն եւ վերջաւորութիւնը: Իսկ երկրորդը թողուցած է խուլ ձայն Սերբոսի եւ Ստեփանոս Ասողիկի քով, աւելի իբրեւ քաղաքական միջադէպ մը քան կրօնական ազատութեան պատերազմ: Բայց ուր կը լուեն հայ ազգիւրները, հոն լսելի են արտաքինները, բերելով իրենց թեւերու վրայ դէպքերուն մանրամասն նկարագրութիւնը<sup>1</sup>:

Երկու պատերազմներն ալ ծագում առած կրօնական ճնշումներու հետեւութեամբ, ունին նման շարժառիթներ, տեղի ունեցած են գրեթէ նոյն ուղղադաշտերու վրայ, նոյն իսկ համանուն սպարապետներու հրամանատարութեան տակ: Մինչ մէկն աւելի տեղական ապստամբութեան մը հանգամանքն ունի, իբրեւ պարսկական ներքին խնդիր մը, եւ ճնշուած է անաղմուկ, երկրորդը զբեցած է միջազգային հանգամանք եւ համբաւուած է «Հայոց պատերազմ», այնու որ դարձած է պատճառ բիւզանդական-սասանեան յինամեայ խաղաղութեան դաշինքի լուծման եւ երկու հօր պետութիւններու մէջ զրգոած քսանամեայ պատերազմ:

Այն պարզան որ առաջինը հակառակ ժամանակաւոր ճնշման, ապա Վահանի քաղաքապետական ճարպիկութեամբ եւ տոկուն դիմադրութեամբ ունեցաւ յաղթական վերջաւորութիւն, եւ արձանագրուեցաւ Ղ. Փարպեցւոյ հրաշալի գրչով իբրեւ պատմութիւն հայ ժողովուրդի սպարական խիզախութիւններու, ասպետական շահատակութիւններու, մնաց յիշատակով անմոռաց հայ ժողովրդեան սրտին մէջ:

Իսկ երկրորդն, որովհետեւ հայ ժողովրդեան համար եղաւ աղիտարեր, հայ աշխարհին համար բազմալուսանգ, ուր երկիրն կապտուեցաւ իւր քաղաքական ազատութիւններէն, նախարարական տուները թափուր հայրենի ստացուածներէ ցրուեցան վտարանդի օտարութեան մէջ, մարտական շարժումները երկրին սահմաններէն ներս եւ դուրս երկարեցան քսանամեայ ժամանակով եւ այսպէս անհնարինս հարուածեցին ազգաբնակչութիւնը, այս պատճառաւ ալ հակա-

<sup>1</sup> Հմմտ. Հ. Ն. Ա. կ ի ն ե ա ն, Դուռնոյ 572ի ապստամբութիւնը. Հ ա ն դ. Ա մ ս. 1913, էջ 61—80:

ռակ առաջին շրջանի ոգեւորութեան տխուր յիշատակ միայն թողուց հայ ժողովուրդի պատմութեան մէջ, անէ՞ծքով յիշեցին եկող սերունդները ապստամբութեան պարագլուխները...<sup>2</sup>: Այսպէս բռուն ոգեւորութեամբ, քաղաքական անկախութեան շողջողուն յոյսերով սկսուած պատերազմը թողուց յուսախար եւ նկատուեցաւ պատճառ աղէտներու. տեղ չգտաւ այն հայ ժողովուրդի սրտին մէջ: Եւ պատմութիւնը, թէեւ գրի առնուեցաւ նոյնպէս հրաշալի գրչով, թէեւ ներկայացուեցաւ իբրեւ մարտիրոսագրութիւնը հայ ժողովուրդի, բայց եւ այնպէս չչարժեց այն տեղի սրտերը, եւ ճարտասանը չլուսեցաւ իւր ոգեւորութեան մէջ:

Բայց հրաշալի մատեններ գտաւ իւր հիացողը: Եթէ բովանդակութիւնը չձգեց իրեն սրտեր, բայց սքանչացուց արուեստը: Արուեստը փրկելու համար զոհուեցաւ բովանդակութիւնը:

Արդէն 1913ին, երբ կը գրէի 572ի Հայոց պատերազմի դրուագը, զգացած էի, թէ Եղիշէ իւր Վարդանանց պատերազմի պատմութեան մէջ 572ի դէպքերու ազդեցութեան տակ կը գտնուի: Ա՛յնքան շօշափելի էին իր նկարագրութիւններու եւ Հայոց պատերազմի անցքերու մէջ նմանութիւնները: Թէպէտ ուշ, բայց անդրադարձայ թէ նախազգացումներս ուղիղ չէին շահագործուած: Նախապաշարումը թելադրած էր ինձ յարգել յանձին Եղիշէի Վարդանանց պատմիչը: Վերոյիշեալ հարցումները բերին զիս ուղիղ ճանապարհի վրայ. հարկ էր թօթափել ամէն նախապաշարում, կանխակալ կարծիք. պէտք էր առաջնորդուել ուղիղ դատողութեան լուսով: Կարգացի միւսանգամ Եղիշէն եւ նկատեցի հոն պատմութիւնը 540—590 տարիներու, նկարագրութիւնը Հայոց պատերազմին նախօրեակին, միջօրէին եւ վերջալուսին:

Եղիշէ 2. դարու վերջին տասնեակին դրած է 572ի հայկական շարժման պատմութիւնը, յետաստեղծ աղանդով նախընթաց երեսնամեայ շրջանին վրայ, ուր թոսրով Ա. Անուշըրուանի զոռ պատերազմասէր եւ խրոխտ անձնաւորութիւնն է ցցուած: Յազկութիւններով արբած ինքնակալը կը խորհի ի ներքուստ ամբաստանել պետութեան հիմերը. ինքնավստահ կը ձեռնարկէ միւսան-

<sup>2</sup> Գիրք Թղթոց, էջ 93:

գած հին փորձերը, որոնք յինքեան ապարդիւն՝ ներքին տեղիւնութեան առիթ էին միայն եղած եւ եղան դարձեալ պատճառ նոր տեղիւնութիւններու:

Հակառակ իւր թագաւորութեան սկիզբը (532) Տիգրանի եւ Բիւզանդիոնի մէջ կնքուած խաղաղութեան դաշինքին, պատճառ առնելով Բիւզանդիոնի կողմանէ անվճար մնացած տարեկան տուրքերը, առանց պատերազմ հրատարակելու կը խաղայ թոսրով յեղակարծումն բիւզանդական երկրամասեր եւ անխիղի կ'ապստակէ անպաշտպան աշխարհներ եւ կը վերագառնայ՝ միւսանգամ արշաւելու ծրագրով տոգորուն: Սկիզբ առին դարձեալ երկարամեայ պատերազմները Արեւելք. հազիւ 562ին յաջողեցաւ կնքել խաղաղութեան դաշինք, այս անգամ 50ամեայ տեւողութեամբ. երբ երկակողմանի պայմանագրութիւններուն մէջ կը նշանակուէր նաեւ վերադարձ Պարսկաստանէն Հոտմէական սահման փախստականներու: Թոսրով ապահոված իւր հարաւային սահմանները, միանգամայն վստահ Բիւզանդիոնէն իրեն հոսելիք գումարին վրայ, կ'արշաւէ Լիւսիսային եւ կովկասեան ազգերու դէմ զայլու զանոնք ամուր պատնէշներով եւ հօր բազկաւ: Նաեւ ուշադիր երկրին տնտեսական բարգաւաճման եւ բարօրութեան; ի զլուխ կը հանէ իւր հօրը՝ Կաւատի ծրագրած եւ սկսած հարկերու դրուքեան բարելաւումը (պարսկական տեսակէտով). եւ վերջապէս Բիւզանդիոնի դէմ ի ներքուստ ամբաստանելու համար պետութեան ապահովութիւնը կը ձեռնարկէ պարտադիր հոշակել պետական կրօնը՝ զրադաշտականութիւնը իւր սահմաններէն ներս, բայց յատկապէս այն կէտերու վրայ, ուր տկարացոյն եղած էր միշտ հաւատարմութիւնը եւ մեծագոյն՝ անջատման վտանգը քրիստոնեայ զրացուցն հրապոյրներուն պատճառաւ:

Ընդգծուած կէտերու մէջ կը գտնեն իրենց բացատրութիւնը յարուցուած հարցերը. եւ Եղիշէի Պատմութիւնը կը ստանայ բովանդակութիւն եւ իմաստ: Ժամանակակից կեանքը կը խօսի հոն զգածուած. վատ է հայրենասիրութեամբ տրամադրութիւնը, տեղ տեղ համակած թախիծով, բայց հեռու վիպական նկարագրէ:

Ներկայ խմբագրութեան մէջ սակայն փոխուած են «Հայոց պատերազմի» բովան-

դակութիւնն ալ, իմաստն ալ: Անձանօթ ձեռք մը կերպարանաւորուած է ամբողջը՝ դիտաւորութեամբ մոռացնել տալու «Հայոց պատերազմի» յիշատակը եւ անոր պատմութեան մէջ փառաւորելու 451ի հայկական պատերազմի դրուագը: Երջուած են հոն անունները, դէպքերը դեպքած են նոր իմաստ, հերոսին դէմքը դիմակաւորուած է: Խոսքով Ա. ներկայացուած է Յազկերտ Բ., դէպքեր ներմուծուած եւ դէպքեր արտաքսուած են. բոլոր փոփոխութիւնները կատարուած հետեւողութեամբ Ղազար Փարպեցւոյ Բ. դրուագին: Միայն մէկ անուն պահուած, մնացած է ամբողջին մէջ անփոփոխ՝ «Դենշապուհ», իբրեւ վկայ գործուած անիրաւութեան դէմ:

Կր պահանջուէր, որ է. Յեղանակը, ուր կը պատմուէր «յերկարունն իրացն խռովութեան» ըստ Ընծայականին, այս ինքն 572ին յաջորդող տարիներու դէպքերը, բնաջնջուէր ամբողջութեամբ, իբրեւ անյարիր վարդանանց պատերազմի պարագաներուն. արդեամբ ալ փոխանակած է դայն առանձին Յեղանակ մը, ուր, նոյնպէս հետեւողութեամբ Ղազարի՝ «նկարագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց եւ չարագոյն եւս երեւի տնօրէնութիւնն Վասակայ», ուրիշ բառով՝ կը գրուէր «Յիշատակարան վասն Վասակայ» (էջ 109):

Խմբագրելը, որ այսպիսի չարափոխութիւն մը մտաբերած է գործել, շատ հնարագէտ եւ իմաստուն մը չի թուիր եղած ըլլալ եւ ոչ ալ քաջ ծանօթ մը Ե. դարու քաղաքական կացութեան: Յեցած մի միայն Ղազար Փարպեցւոյ Բ. Դրուագին վրայ ձեռնարկած է այս ձեւափոխութիւնը. եւ այն չափազանց մեծ անհասկացողութեամբ եւ անճարակութեամբ: Անխղճութիւն էր գործածը. բայց եղած է գոնէ բարեխիղճ նախնական բնագրին խնայել ըստ կարելոյն՝ պահպանելու համար ճարտար մատենագրին եւ սքանչելի հոնտորին ոսկի խօսքերը անփոփոխ՝ հնարաւորութեան սահմանին մէջ: Այս բարեբախտութիւն է: Ա—Գ Յեղանակներու մէջ Սկզբնաղբէն փրկուած է շատ մաս. այսպէս նաեւ Դ—Ձ Յեղանակներէն գոնէ էական կէտերու մէջ: Տուժած են դէպքերուն մասնակից անձինքներու անունները, բայց պատմական դէպքերը ճանաչելի են իրենց նկարագրով: Դիւրին է վերականգնել այս մասերու մէջ սկզբնագիրը յապաւելով յաւելուած-

ները, որոնք Ղ. Փարպեցւոյ Բ. Դրուագին հետեւողութեամբ յերկարուած են առաւելապէս, եւ լրացնելով անունները յեցած Ձ. դարու պատմութեան տուեալներու վրայ, բայց կորսուած են յաւէտ յապաւուած յեղանակներն եւ մասերը:

Այսպէս երեւան կու գայ յանձին Նղիշէի նոր պատմագիր մը Ձ. դարու մութ շրջանին համար: Որովհետեւ կարեւոր շրջան մըն է դարս Հայոց պատմութեան համար, անցման կէտ մը, ստացուած ամենադոյն տեղեկութիւններն անգամ պիտի ցոլացնեն լոյս ընթանելու համար Ձ. դարու հայ քաղաքական, տնտեսական եւ եկեղեցական կեանքը եւ անոր համաձայն լուսարանելու է. դարու հանգամանքները: Պիտի պարզուի, լուսաւորուի նաեւ Ե. դարու 440—460 շրջանի Հայոց եւ յարաբերաբար Պարսից պատմութիւնը, ազատելով դարն այն շիտթ տեղեկութիւններէն, որոնք կը բղխէին աղաւաղուած, կեղծուած «Հայոց պատերազմի» պատմութենէն, վերագրուած Ե. դարու հեղինակ «ակնաւոր» Նղիշէի:

Ես նկատի ունիմ այս եւ հետեւեալ տողերու մէջ միայն Նղիշէի Ա—Ե Յեղանակներն եւ արտաքոյ է. Յեղանակին գտնուած մասերը: Իսկ Ը. Յեղանակը պիտի ուսումնասիրուի յետոյ առանձին գլխով իբրեւ ուրոյն աշխատութիւն՝ վերագրուած Նղիշէի:

8. ՆՂԻՇԷ ԵՒ ԲԱՐՇՈՒՄԱ

Նղիշէի Պատմութեան կրճատունն կամ փոփոխութիւնը դրած էր արդէն արձագանգ աւանդութեան մէջ: Լսեցինք վերադոյն (§ 3) Թովմաս Արժրունին, որ կը պատմէր թէ Բարձուժա ասորին Պերոզի օրով եւ հրամանով երեւցած է Արզնարդիւն (Արզոն, Աղձնիք) եւ փորձած է հոն տարածել բունութեամբ նեստորականութիւնը: Այս առթիւ ծանօթացած է Նղիշէ քահանայի հետ եւ խնդրած իրմէ՝ աչքէ անցնելու համար հոչակուած պատմագիրը: Նղիշէ կը համակերպի Բարձուժայի խնդրանքին եւ կու տայ կարգալու համար: Բայց Բարձուժա, երբ Մերչապուհ Արժրունւոյ սպառնալիքներու առջեւ տեղի տալով կը ստիպուի հեռանալ Արզնարդիւնէն, սրտմտած եւ ի նշան վրէժխնդրութեան կը կրճատէ Պատմութենէն Արժրունի Վահան իշխանի մասին գրուած դրուատական հատուածներն եւ այնպէս կը վերագրանէ

հեղինակին, անոր մահուանէն քիչ յառաջ: Նղիշէ չ'անդրադառնար գործուած աւերին: Բիչ ետքն ալ կը վախճանի:

Միջադէպս այս ձեւի մէջ չի կրնար անշուշտ պատմական համարուի: Ե. դարու երկրորդ կէսին կար իրօք Բարձուժա մը, մոլեռանդ պարագլուխ մը նեստորականութիւն, որ ընտրուեցաւ Մծբինի եպիսկոպոս եւ նշանակուեցաւ Պերոզէն մարզպան սահմանազաւառներուն. գործեց արիւնհեղութիւններ. արգար եւ անարգար միջոցներով ջանաց տարածել նեստորականութիւնն եւ ընծայել զայն Պարսկաստանի քրիստոնէաներու համար պետութենէն միակ հանդուրժուած կրօն. եւ մեռաւ 492 կամ 494ին<sup>1</sup>: Վկայուած է նաեւ ասորի մատենագիրներէ (Բարձուժաբէն), թէ Բարձուժա նեստորականութիւնը քարոզելու համար միջամուխ եղաւ նաեւ հայկական սահմաններէն ներս. բայց բախեցաւ հայ իշխաններու եւ եպիսկոպոսներու ընդդիմութեան<sup>2</sup>: Ուստի թէ անիկա եկած է Արզնարդիւն (ուր կային մեծ թուով ասորիներ, նաեւ ունէին սեպհական եպիսկոպոս<sup>3</sup>), այսքան կարող էր Թովմաս գիտնալ

<sup>1</sup> J. Labourt, Le christianisme dans l'empire perse sous la dynastie sassanide (224—632). Paris 1904, p. 131—152. Das Buch der Synhados nach einer Handschrift des Museo Borgiano. Übersetzt und erläutert von Dr. O. Braun, Stuttgart und Wien, 1900, 59—83.

<sup>2</sup> Barhebraeus, Chronicon Ecclesiasticum, pars II. ed. Abbeloos-Lamy. Louvain, 1874, էջ 63—78. Հմմտ. առ այս Նղիշէ Վ. Դուրեան՝ Նղիշէ-Բարձուժա. Տր կր աղ ու ն ա. 1888, էջ 14—26: Երուանդ Վ. Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիներէ հետ. Վաղարշապատ 1908, էջ 80—81.

<sup>3</sup> Բարձուժա եկաւ Արզնարդիւն, վասն զի Արզնարդիւն կամ Arzun, Arzon (Արձն, Արզն) գաւառն Karduh (Կորդուք), Bet Zabdai (Ծաւրէք), Bet Rhimai եւ Bet Mwkayeh հետ կ'իյնար Մծբինի եպիսկոպոսի մեարսպոլութեան տակ եւ այս կողմերու եպիսկոպոսները կ'ենթարկուէին անոր իշխանութեան, ինչպէս սահմանած էր Պարսկաստանի ասորի քրիստոնէաներու կաթողիկոսն Իսահակ Տիրոնի 410ի ժողովին մէջ (Braun, անդ, էջ 30): Արզնարդիւն, զոր կը յիշէ նաեւ Նղիշէ, էջ 10 իբրեւ հարաւարդման Հայաստանի սահմանազաւառ. «Հրաման եւսս յայտարհն Հայոց... ի Ծաւրէից եւ ի Կորդուց, յԱղձնեաց եւ թայրսմ տեղեաց հետաւորաց... Գունդ կազմէր (Պարով Ա.) ի Հայոց մեծաց... եւ որ այլ եւս ի կողմանց կողմանց հարաւոյ՝ մերձ ի սահման Տաճկաստանի եւ ի Հոնոմոց աշխարհն՝ եւ ի Կորդուց եւ ի Գոլացն եւ ի Ծաւրէիցն եւ յԱրզնարդիւն. որք էին ամենեքեան հաւատացեալք ի մի կաթողիկէ առաքելական եկեղեցի»: Կորդուց եւ Ծաւրէից կից Արզնարդիւնի յիշատակութիւնը ամէն կասկած կը բառնայ անոր Arzunի հետ նոյնութեան: Եւսեւ Թովմաս Արժրունւոյ այն տեղիքն, ուր կը պատմէր թէ Բարձուժայ «եկն եւսս յԱրզնարդիւն եւ յաշխարհն Մոկաց, զի անդ գնեստորական պատնոյն սերմանից սերման» (էջ 81) եւ դարձեալ թէ «ի նմին ժամուղացեալ վասն նորս մեծ իշխանին Արժրունեաց Մեր-

գրաւոր աղբիւրէ մը: Եւ ունեցած է Թովմաս ստուգիւ գրաւոր աղբիւր մը Ե. դարու երկրորդ կէսին Ասորական-հայկական յարաբերութիւններու մասին. յատկապէս Հայոց Գրիստափոր (= Գիւս<sup>4</sup>) կաթողիկոսի գործունէութեան նկատմամբ իր պատմածները կը բղխեն այսպիսի գրաւոր աղբիւրէ: Բայց թէ Բարձուժա հանդիպած է Մոկաց լեռներու վրայ ճգնող Նղիշէի մը, եղբժէ է հմուտ հայերէնի, կարգալ եւ հասկնալու չափ Նղիշէի մատենաը, այս կը մնայ յիշելի: Այն անվիճելի է սակայն, որ Նղիշէի մատենաը 590էն յառաջ հրատարակ չէր կրնար ելած ըլլալ, ուստի եւ Մծբինի եպիսկոպոս Բարձուժան<sup>5</sup> չէր կարող հետաքրքրուած ըլլալ անով:

Նղիշէ Վ. Դուրեան, որ մանրամասն վերլուծած է Թովմասի այս տեղեկութիւնները, կը հարցնէ. «Բայց ի՞նչպէս իբրեւ բաբելոնի ումեք կը յանձնէ (Նղիշէ) իւր գրութեան այն, որ Եփեսոսի Ժողովէն քիչ վերջն սկսած էր արդէն ուղղափառ քրիստոնէից եւ եկեղեցականաց պատուոյն՝ խղճին եւ կենաց վրայ բռնանալ» (էջ 18): «Մեր կարծիքն այն է թէ՛ եթէ Բարձուժայի ձեռքն հասած լինէր Նղիշէի պատմագրութիւնն, ամէն պարագայի տակ կը ջանար զայն հետաքրքրել կորուսանել» (20):

Միւս կողմանէ, ինչպէս կը դիտէ իրաւամբ Դուրեան, եթէ Նղիշէ «ի լերինս Մոկաց» միանձնական կենաց անձնատուր էր, ըստ աւանդութեան անտես հովիւներուն անգամ, ի՞նչպէս եւ ո՞ւր պատահեցաւ Բարձուժա Նղիշէին:

չապէս, որ յայնժամ ի Տնօրեացն ամբանայր բիրդի՝ յղէ առ նա (պատգամ) ելանել դնալ ի սահմանացն յայնոցիկ» յայնժամ այս նոյնացումին կը լսուի վասն զի Տնօրեք-Կորդուք-Կորդուք այն հարաւարդման աշխարհներն են որոնք կը գտնուին Տիրիսի սահմանակից եւ Աղձնիքի շրջանին մէջ: Հիւրճման, որ Արզուն, Արձն եւ Արձաննէ կը նոյնացնէ Աղձնիքին հետ (Հին Հայոց տեղւոյ անուններ, 77—79, 167—169), կը դժուարի վճիռ կորել Արզնարդիւնի նոյնութեան մասին (անդ, էջ 183): Եւսեւ Bet Mwkaye կը նոյնացուի Մոկաց հետ (Հմմտ. Հիւրճման, անդ, 83), ուստի այս աշխարհն ալ պիտի բաղձար Բարձուժա շահել իր վարդապետութեան: Bet Rhimai մասին տե՛ս Հիւրճման, անդ 183—184: Arzunի եպիսկոպոսական աթոռին վրայ ասորական եպիսկոպոսներ տե՛ս Braun, անդ, 32, 34, 46, 86, 190:

<sup>4</sup> Ուրիշ տեղ մտադիր եմ խօսել Գրիստափոր = Գիւս կաթողիկոսի այս նոյնութեան մասին:  
<sup>5</sup> Ուշագրաւ է որ 554ին նեստորական Յովսէփ կաթողիկոսէն դուժարուած մէկ սիւնհոզոսի որոշումներուն իւր հաւանութիւնը կու տայ գրաւոր Karduh եպիսկոպոսն Բարձուժա (Braun, 162):

Դուրեան բացարեւելու համար զրոյցիս ծագումը, կը գրէ. «Որովհետեւ Բարձրումա քաղաքական բազում չարիքներ հասոյց՝ մասնաւորապէս տանն Արժրուեաց՝ ինչպէս կը վկայէ նոյն ինքն Թովմաս, անշուշտ աղիտաւոր անձ մէկը դարձած նա այդ ցեղին համար, եւ տխուր հետք մը թողած նորա պատմութեան մէջ, ուստի բնական էր որ Արժրուեաց տոհմի փառքն նսեմացնող կամ պատուոյն դաւաճանող ո՛ր եւ է պարագայ որ կրնար մտածուիլ, ինքնին զարթուցանէր անորէն Բարձրումայի յիշատակը՝ դադարաբեր գուգորդութեամբ մը» (էջ 26):

Յամենայն դէպս Թովմաս Արժրուեի պահպանած է մեղի արձագանգը իր ժամանակակիցներու բերանը պատող զրոյցի մը, պատմուած որդի ի հօրէ, որոնց համեմատ տիրող համոզումն էր թէ Եղիշէի մատեններ վթարուած հասած է, տեսած է կրճատումներ: Եւ որովհետեւ Թովմային ծանօթ Եղիշէն Ե. դարու հեղինակ մը կը ներկայանար, պատմիչ Աւարայրի կուռին, Թովմաս իր պատմական հասկացողութեամբ հրապարակի վրայ շրջած զրոյցը փոխադրած է Ե. դար եւ կապակցած Բարձրումայի Արդնարդին գալու պատմութեան հետ:

Պիտի հետեցնենք ասկէ, թէ Եղիշէի Պատմութեան կրճատումը զրուած է ժամանակակիցներու ուշադրութիւնը. անոնք դպացած են թէ Մատենը տուժած է իւր ամբողջութենէն: Այս երեւոյթը կ'երևայ թէ յառաջացուցած է բողոքի ձայն: Կրճատումը տեղի ունեցած է ժամանակ մը եւ միջավայրի մը մէջ, ուր Մատենը թէեւ ծանօթ, բայց չէր գտած դեռ տարածում մեծաթիւ օրինակութիւններով: Միջավայրը Թովմաս Արդնարդին եւ Մովսէս Կալանթարի զիտէ՞ եւ ժամանակն Ե. դարու վերջին քառորդը:

Զրոյցն ունէր իր մէջ պատմական կորիզ մը, հիմնուած էր իրողութեան մը վրայ: Ինչպէս այժմ մեր քննութիւնները ցոյց կուտան, ենթարկուած է ստուգիւ Եղիշէի մատենը փոփոխութեան: Այդ փոփոխուած մասերու մէջ կարող էր — ինչպէս կը պահանջէ աւանդութիւնը, խօսք եղած ըլլալ Արժրուեիներու շահատակութիւններու,

Օ Ուստի մտաւորապէս այն կողմերը, ուր թ. դարու առաջին քառորդին ծնունդ առաւ Մովսէս Սորենացոյ Հայոց Պատմութիւնը՝ հմտ. առ այս Զ. Ն. Ալիկան, Մատենագրական հետազոտութիւններ. Հտր. Գ. (Վիեննա 1930), էջ 280—286:

յատկապէս Վահան Արժրուեոյ մը մասին: Եղիշէի Պատմութեան է. Յեղանակը, ուր «ղերկարունն իրացն խոտլութեան» պիտի ձառագործէր, յարմարագոյն տեղն էր նման յիշատակութիւններու: Բայց այն կրճատուած է: Դժբախտաբար 550—590 շրջանի Արժրուեաց իշխաններու անուանացանկերն ալ պահպանուած չեն, ստուգելու համար, թէ եղած է այս շրջանին Վահան Արժրուեի մը: Առաջին անգամ 601ին կը յայտնուին անոնք, երկար լրութենէ ետքը: Կը յիշէ այս թուին Սերիոս (էջ 56) Վարդան Արժրուեին ի թիւս այն նախարարներու, որոնք Սոսրով Բ.էն Տիրոն կանչուեցան եւ հոն պահուեցան: Դարձեալ 608ին կ'ընկերանայ Սմբատ Վրկան մարզպանին «Վարազշապուհ Արժրուեի» (Սեր. 65) եւ 610ին, երբ պարսիկները յառաջացած էին մինչեւ Կեսարիա, հոն կը բռնեն (անշուշտ յունական ծառայութեան մէջ գտնուող) Վասակ Արժրուեին, «զորդի Սահակայ նահապետին Արժրուեաց, եւ սպանին զնա հանդէպ դրանն քաղաքին ի վերայ փայտի. որ թէպէտ եւ բազում աւճիռս վնասուց դորձեալ էր նորա ի դորուն Պարսից, սակայն ամենայն զօրն Պարսից ողբայր զնա վասն քաջութեան եւ արիութեան. էր՝ մանուկ ուժող եւ բարձրահասակ. մանաւանդ զի անեալ եւս էր ի մէջ նոցա, եւ վարժեալ եւս ի նոցանէն հրահանգաւ» (էջ 78): Արժատաւոր դաւակ մը հաւանորէն 572ի պատերազմներուն մասնակից Արժրուեաց Սահակ նախարարին:

9. ՀԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ Ղ. ՓԱՐՊԵՑԻՈՅ Բ. ԴՐՈՒԱԳԻՆ. ԵՂԻՇԵՒ Ա.—ԵՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ ԵՒ 572Ի «ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԿԻՑ ԴԵՊԵՐՈՒ

Որպէս զի խորհրդածութիւններս զիւրընկալ ընծայուին ընթերցողներուս, անհրաժեշտ կը համարիմ ներկայացնել նախ համատեսիլ պատկեր մը 451ի հայկական պատերազմի պատմութեան համաձայն Ղ. Փարպեցոյ, եւ ապա գուղադրութեան մը մէջ համեմատութեան առնել 572ի «Հայոց պատերազմի» պատմութեան հետ Եղիշէի Պատմութիւնը: Ակնարկ մը համադրութեանս վրայ երեւան պիտի բերէ թէ ո՛րը համաձայն է Եղիշէ Ղ. Փարպեցոյ հետ, ուստի եւ ունի կախում անկէ, եւ դարձեալ թէ ո՛րը կէտերու

7 Տղ. եւ:

մէջ կը ձայնակցի 572ի Հայոց պատերազմին յարակից դէպքերուն, հետեւաբար անկախ է եւ համաձայն տիեզերական պատմութեան:

Եղիշէի եւ Ղաղարի մէջ նկատուած աղերսը նախորդ քննիչներէ, ինչպէս Կոստանեանցէ, Կիւլէսէրեանէ, նաեւ Տէր—Պօղոսեանէ եւ Աղոնցէ, քննութեան առնուած է արդէն. այս պատճառաւ ալ ես պիտի խուստիմ միւսանգամ շօշափել այս խնդիրը, բայց եթէ այն դէպքին, ուր երկու պատմագիրներու համեմատութիւնը անդրադոյն լուսարանութեան համար անհրաժեշտ ընծայուի:

Իսկ Եղիշէի համաձայնութիւնը Պատմութեան հետ պիտի դաւնայ յատուկ ուսումնասիրութեան առարկայ խառն Զ. դարու պատ-

Բ. Եղիշէ. Ա.—Ը Յեղանակները:

1. Վոսմ Ե., Հայրն Յազկերտի՝ բարեացակամ հանդէպ քրիստոնէից (63—64):

2. Յազկերտ Բ. գոռոզ է, ինքնահաւան, պատերազմատէր. «մեծ ոմն զինքն կարծէր քան զընութիւն հայրենի կարգին», «յանմահից իմն կարգի զնէր զինքն» (12). կը հետաքրքրուէր օտար կրօններով. «հանդէս առնէր ամենայն ուսմանց»:

3. Յազկերտ Բ. իւր թագաւորութեան երկրորդ տարին կ'ասպատակէ Յունաց աշխարհը «մինչեւ Մծբին»: Կայսրը կ'առաջարկէ խաղաղութիւն. կը կնքուի դաշինք. կ'որոշուի բիւզանդական հող փոխստականներու վերադարձը: Կը նահատակուի Գարեգին:

4. Յազկերտ իւր թագաւորութեան Գ.—ԺԱ. տարիներուն կը ձեռնարկէ արչաւանք հիւսիսային ազգերու դէմ: Կը փակէ ձորայ

Ա. Ղազար Փարպեցի. Բ. Դրուագ:

1. Վասակ Սիւնի, նախ մարզպան Վրաց կողման, կը մշակէ բարեկամական յարաբերութիւններ Հոնաց հետ (83):

2. Վասակ կը կարգուի մարզպան Հայոց. բոր հարկերն իր ձեռքն են. պարսիկ դորձակալները ենթարկուած են իրեն (83):

3. Վոսմ Ե. կը վախճանի 438: Յազկերտ Ա. ի օրով սկիզբ առած հալածանքները քրիստոնէից դէմ կը շարունակուին իր օրով: 420ին կը ծագի պատ-

մական իրադարձութիւններու հետ. նկատի պիտի առնուին դարուն սկզբէն մինչեւ 590 պատահած ներքին եւ արտաքին դէպքերը, որոնք տեղի ունեցած են Հայաստանի սահմաններէն ներս կամ դուրս, որքան անոնք կը շօշափեն Եղիշէի Պատմութիւնը կամ աղբրսի մէջ են «Հայոց պատերազմի» հետ: Տեղ տեղ պիտի ընդարձակուին մեր խորհրդածութիւնները, բայց միշտ առաւել լուսարանելու դիտաւորութեամբ Եղիշէի մութ կամ բացայայտ ակնարկութիւնները: 2. դարու Հայոց պատմութիւնը պիտի գծուի հոն յեցած նոր ազդիւրներու վրայ, զորոնք կ'ընձեռնեն մեղի վերականգնուած Եղիշէն եւ արտաքիները:

Գ. Հայոց պատերազմը եւ նախընթաց եւ գուղընթաց պատմաները:

1. Կաւատ Ա., Հայրն Սոսրովի, կու տայ կրօնի ազատութեան հրովարտակ Հայերուն. կը նպաստէ Նեստորականութեան տարածման ի Պարսս:

2. Սոսրով Ա. գոռոզ է, ինքնահաւան, պատերազմատէր, արբած յաղթութիւններով, կը կոչէր ինք զինք Անուշրուան = Անաս, կը հետաքրքրուէր յունական փիլիսոփայութեամբ, քրիստոնէական-դաւանաբանական վէճերով:

3. Սոսրով Ա. 539/543 կ'ասպատակէ Կալինիկէ—Անտիոք—Կիլիկիա. կը պաշարէ Գարա բերդաքաղաքը «մերձ ի Մծբին», կ'արշաւէ Երեսիս եւն: Յաղթական եւ աւարով կը վերադառնայ Պարսկաստան: 562ին կը կնքէ Հովմայեցոց հետ 50ամեայ խաղաղութեան դաշինք. կ'որոշուի փոխստականներու վերադարձը: Կը նահատակուի Գրիգոր Մանածիւր Ռափիկ (541/2):

4. Կ'արշաւէ Հիւսիսային եւ Կովկասեան աղբրու դէմ: ձորայ պահակէն «Սաղիբ» կ'ասպատակեն Աղուանքը: Կ'արշաւէ Բու-

րազմ Տիրոնի եւ Բիւզանդիոնի մէջ. 421ին կը կնքուի 50ամեայ խաղաղութիւն Վոսմ Ե.ի եւ Թէոփոս Բ.ի միջեւ, միջնորդութեամբ Անատոլիոս սպարապետի: Հալածանքը թուրացաւ, բայց տեւեց դեռ 30 տարի: Անատոլիոս կը դիւրացնէ Մաշտոցի ճանապարհն ի Կ. Պոլիս):

4. Վոսմ Ե.ին կը յաջորդէ որդին՝ Յազկերտ Բ. 438—457: [Ըստ պարսիկ-արար աղբրներու՝ արար էր հանդէպ հպատակներու. բարեացակամ հանդէպ բանակին. կոշուած է Բարեմոյն: — Թէպէտ Տարաբի կը պատմէ թէ թագաւորն իւր հաղաբարկան

պահակը, կ'ըլլայ միջամուխ Բուշաններու երկիրը, կ'ասպատակէ շատ դաւաններ, կ'ընկճէ անոնց թագաւորը: Այս պատերազմներուն կը մասնակցին նաեւ Հայկական բանակները. որոնք տարուէ տարի կը լուծուէին եւ փոխարէն կու գային նոր ոյժեր:

5. Որովհետեւ Հոռոմք յարգեցին խաղաղութեան դաշինքը, Սայլընդուրք եւ Հոնք դադարեցան ասպատակել սասանեան սահմանները, Բուշանք կրեցին պարտութիւն, սկսեալ Յագկերտի թագաւորութեան 12րդ տարիէն, Պարսկաստան կը վայելէ խոր խաղաղութիւն: Մոգերը աստուածոց շնորհակալութեան համար կը պահանջեն թագաւորէն հալածել քրիստոնէութիւնը սասանեան պետութեան սահմաններէն ներս: Թագաւորը, որ երբեմն երբեմն կ'երեւցնէր իւր թշնամութիւնը քրիստոնէութեան հանդէպ, այժմ աւելի յայտնադոյնս երեւան կը բերէ իւր ատելութիւնը. կը ստիպէ բանակին մէջ գտնուած հայ նախարարները յուրացութիւն եւ յընդունելութիւն մազդէական կրօնի: Չորս հոգի «ի բուն աւագաց» կ'ենթարկուին «ի փորձութիւն տանջանաց» (16—17): Կը հրաւիրէ հայ նախարարները հացկերոյթի. կը յայտնէ թշնամական վերաբերմունք: Նախարարք միւսանդամ կը զրկուին թշնամիներու դէմ. ուր շատերը կը գտնեն իրենց մահը. ուրիշներ անթիւ զրկանքներ (18):

6. Գենշապուհ կը զրկուի Հայաստան աշխարհագրի համար: Կը զրուին նոր հարկեր. հազարապետը կը փոխարինուի պարսիկ պաշտօնեայով. եկեղեցականներու ձեռքէն կ'առնուին դատարանները եւ կը յանձնուին մողպետներու եւն (19):

7. Մազդէական դէնք կը քարոզուի ի Հայս: Միհր-Ներսէս կը գրէ մազդէական վարդապետութեան բովանդակութիւնը. կը զրկէ Հայաստան (20): Պատճեն:

8. Հայ Եկեղեցականներն եւ նախարարները կը գումարուին յԱրտաշատ, կը գրեն պատասխան Միհր-Ներսէսի թղթին: Պատճեն

շաններու վրայ. կը յայթէ: «Կապեաց զպահակն ձորայ եւ Աղուանից» (Սեր. 28):

5. «Այս Սոսրով... ի Ժամանակս իւրոյ թագաւորութեանն յառաջ քան զասպատակութիւնս զայս հաստատեաց զերկիր. քանզի էր խաղաղասէր եւ աշխարհաշէն» (Սեր. 26): Մոգերու զրդումով կը յարուցանէ հարածանք քրիստոնէութեան դէմ. կը ճնշէ Մազդակեանները, Մանիքեցիները: Մար Աբա Նեստորականներու կաթողիկոսն եւ ուրիշ եպիսկոպոսներ եւ աւագներ կը բանտարկէ. կը չարչարէ պէսպէս տանջանքներով եւ զրկանքներով: Կը զրաւուին քրիստոնէիցի չըքերը: Կը նահատակուին քրիստոնէաներ. կը բանտարկուին երեք եպիսկոպոսներ:

6. Սոսրով Ա. ի գլուխ կը հանէ Կաւատի ձեռնարկած մարդահամարն եւ հարկատուութեան օրէնքը: Կը սահմանուին հարկի նոր օրէնքներ: Մոգերուն կը յանձնուի դատաւարութիւնը. Գենշապուհ Հայաստան կ'ուղարկուի:

7. Սոսրով կը ստիպէ Հայերը, Վրացիներն եւ Աղուաններն ընդունիլ մազդէական դէնք: Սուրէն ձիհր-Վշնասոյ բանակով կ'ուղարկուի Հայաստան. իրեն հետ մողեր:

8. Հայերը կը գումարեն ժողով. կ'ընդգլխմանան հրամանին: Կը յիշեցնեն Շապուհ Բ. ի անյաջող փորձերը. կը ներկայացնեն

վազան սիւնոյ: Փեսային անհամաձայնութիւնն ամսանոյն հետ կը վերադառնան աներոջ սիրտը. այս պատճառաւ ալ Վասակ «հնարէր սպանմամբ խնդրել զվրէժ թշնամանաց գտներն իւրոյ. մինչեւ հալածեալ հանէր գնա յաշխարհէս Հայոց» (39):

7. Վարդապետան սպաստան կը փնտռէ Միհր-Ներսէսի մօտ: Կ'ընդունի մազդէական դէնք: Կը խորհի միջոց լուծել վրէժ Վասակէն:

8. Միհր-Ներսէս կ'առէր քրիստոնէութիւնը.

Միհր-Ներսէս բանակով զրկած է սահմանները՝ ասպատակելու եւ ստիպած է Հոռոմացիները ըստ գանաց տալ պարտական սուրբերը, բաց արեւմտեանք շեն յիշեր այսպիսի արշաւանք: Միհր-Ներսէս է Արեայ հազարապետը (39):

5. [Յագկերտ Բ. կը հալածէր Պարսկաստանի քրիստոնէաները]: Վարդան Մամիկոնեան ի Մարվիտոս՝ ի ներկայութեան Յագկերտի՝ կ'արխանայ (79):

6. Վասակ տուած էր իւր դուստրը Վարադ-

եւ Անուանացանկ ժողովականներու (29—31): Հայոց մերժողական պատասխանը կը զայրացնէ զՄիհր-Ներսէս եւ մողպետները, կը զրգունէ թագաւորը, որ կը հրամայէ նախարարներուն ի Գուռն գալ. անոնցմէ մաս մը կը գտնուէր ի Տիգրոն, ուրիշներ Հոնաց պահակի առջեւ, ոմանք ալ Հայաստան: Ի մեծի շարաթու գատկին կը ներկայանան անոնք թագաւորին. որ չ'ընդունիր ըստ սովորականին. կը հշտամբէ անոնց դիմադրութիւնը. կը ստիպէ երկրպագել արեղական (32—34): Նախարարք կ'ընդգլխմանան միւսանդամ հրամանին. կը յիշեցնեն թագաւորին Շապուհի անողուտ փորձերը: Թագաւորը կը հրամայէ արգելափակել նախարարները:

9. Կը սպաննայ թագաւորը աքսորել նախարարները հեռուոր վայրեր, ինչպէս պատահած էր այս երբեմն Վրաց իշխաններուն, եւ բնութիւններ դործադրել ի Հայս: Թագաւորի այս մտադրութիւնը կը յայտնէ նախարարներուն արքային ներքին խորհրդական մը, որ քրիստոնէայ է. կը յորդորէ գտնէ առ երեսու ուրանալ, տեղի տալու համար բարկութեան: Նախարարները կ'ուրանան:

10. Թագաւորը լուր կ'առնէ Բուշաններու նոր շարժումներու մասին. եւ կը խաղայ անոնց վրայ (38, 39):

11. Նախարարներն կ'արձակուին ի Հայս. անոնց հետ մողերու բազմութիւն մը (39—40): Ճանապարհին քրիստոնէայ ազգաբնակչութիւնը կ'ողբայ ուրացեալներու դրութիւնը (41—43): Քահանաներէն մէկը կը յառաջէ գուժ տալու եպիսկոպոսներու: Ռամիկ ժողովուրդը կը զրգունուի (43—44):

12. Կարաւանը կը հասնի Անդղ գիւղը: Ղեւնդ երէց եւ իրեն հետ բազմութիւն մը կ'ընդառնան նախարարներուն. կ'արգիլէ չուին յառաջխաղացութիւնը: Հայաստան զրգունուած է: Մողպետը չուարած է ստեղծուած դրութեան առաջ: Կը պատմէ Շապուհոյ օրով յարուցուած կրօնական հալածանքի

(Վաղարշի) հրովարտակը (484): Երկիցս եւ երկիցս կը խնդրեն չնեղել հայերը կրօնի համար:

9. Կաւատ Ա. եւ Սոսրով Ա. Վրաստանի եւ Լազիկիայի մէջ փորձած էին ճնշել քրիստոնէութիւնը: Վրաց Գուրգէն թագաւորը ընտանիքով ապաստան փնտռած էր Յուսափնոսի քով (523): Սոսրով «կալաւ ձերբակալ դարձայն Եգերացոց» (Սեր. 28): Ունէր Սոսրով քրիստոնէայ խորհրդականներ:

10. Հոռոմացիք կը զրգունուի Կովկասեան ազգերը ասպատակելու Պարսից երկիրները: Սոսրով կ'արշաւէ միւսանդամ անոնց վրայ:

11. Մարդպանն Սուրէն եւ մողերը կը կառուցանեն կրակատուն Գուռնի մէջ: Ս. Գրիգոր Մայր Եկեղեցին կը վերածուի մթերանոցի:

12. Հայոց Կաթողիկոսն եւ նախարարները կը զրուցանեն Մարդպանը. կը խնդրեն զազրեցնել Կրակատան շինութիւնը. երբ կ'ընդգլխմանայ, կը ծանուցանեն իրողութիւնը հոյ ժողովրդեան: Ոտք կ'ելլէ ոսմիկը. կը զինուի:

Կը խորհէր հնարք տարածելու մազդէականութիւնն ի Հայս, ի Վիրս եւ յԱղուանս, ամբաստնելու պետութեան ներքին պէր ընդդէմ Հոռոմացիաց: Վարադ-վազան կը խոստանայ իւր աջակցութիւնը, փոխարէն տանելով խոստում սասանալու Հայոց մարդպանութիւնը:

9. Միհր-Ներսէս կը պարզէ իւր խորհուրդները Յագկերտի առջեւ. արքայն կու տայ իր հաւանութիւնը:

10. Կը հրամայէ Յագկերտ մազդէական դէնքն

հանդանակը գրաւոր ներկայացնել Հայոց. պարտաւորել Հայերը ընդունիլ զարաշտական կետր. հրովարտակ կ'ուղարկուի:

11. Հոյք կը գումարեն ժողով, եպիսկոպոսներ եւ նախարարներ: Անուանացանկ ներկաներուն: Ժողովին վայրը չի յիշուի. Վաղարշապատ, Արտաշատ: Կը պատասխանեն մերժողական թղթով. առանց կանխաւ կարգալու ուղարկուած մազդէական հանդանակը:

12. Հայոց պատասխանը կը զայրացնէ թագա-

մասին: Խորհուրդ կու տայ անգղոյշ քայ-  
լերով չբորբորել ժողովրդեան գրգռութիւնը  
(44—48):

13. Մարզպանը (Վասակ) հնարք կը  
խորհի «սուրբ ուխտն» քակելու: Սիւնիքէն  
հրոս կը հանէ: Կը գրգռէ Մողպետը որ Դոնէն  
հրաման բերէ որ Աղուանքի պարսիկ այրու-  
ձին (10·000) Հայաստան ձմեռէ: Թէպէտ  
Մողպետը խաղաղութիւնը կը բաղձայ, բայց  
Մարզպանը՝ «զի սրտի մտօք ընկալեալ էր»  
պարսիկական օրէնքները, կը սրտապնդէ զի-  
մաղբել:

14. Եպիսկոպոսները նկատելով Մարզ-  
պանի բռնած ուղղութիւնը, կը գումարեն  
ժողով, կ'ուխտեն Ս. Միութիւն. բանակը  
կը բաժնեն երկուքի Վարդանի հրամանա-  
տարութեան տակ (49):

15. Մարզպանը մոզերուն ամէն դիւրու-  
թիւն կու տայ. «պղծագործ խառնակու-  
թիւնը» կը շատանայ երկրին մէջ. եկեղեցի-  
ներ իսկ կը բռնաբարուին:

16. Եպիսկոպոսները միաբան կը դիմեն  
Սպարապետին ապարանքը: Բանակը գրգռ-  
ուած է: Կ'որոշուի ամէն զնով ընդդիմա-  
նալ բռնութեան: Նախարար մը, որ հակա-  
ռակ կ'արտայայտուի, տեղւոյն վրայ կը քար-  
կոծուի (50):

17. Ժողովուրդը կ'ընթանայ գէնքի. բա-  
նակը կը բաժնուի երեք մասի. յարձակում  
պարսիկական ոյժին վրայ. կը կալանաւորուի  
Մարզպանը. կը գրաւուին երկրին ամուր կէ-  
տերը (50—51). կը յարձակին Ատրպատա-  
կան եւն (51—53):

18. «Յետ աւուրց բաղձաց եկն հաղա-  
բապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսան  
աշխարհին» գուժելու թէ Հոնաց պահակի  
գորարածինն եւ Դոնէն այրուձի գունդ մը  
կոխեց Աղուանից սահմանները (53—54):

19. Հայք կը փութան պատգամաւորու-  
թիւն մը զրկել Կայսեր, պատմելու Հայաս-  
տանը կը հրամայէ ի Դոնն կոչել Հայոց, Վրաց եւ  
Աղուանից նախարարներն եւ աւագ սեպուհները:

13. Ի սկզբան կը խորհին նախարարները պար-  
զել ապստամբութեան գրօշը. բայց ապա կը զիջանին  
հետեւել հրամանին. կ'երթան խմբովին ի Դոնն:

14. Կ'առաջարկէ Յաղկերտ. կա՛մ ուրացութիւն  
կա՛մ արտը. կը սպանայ աշխարհին՝ աւեր:

15. Վարդան Մամիկոնեան, սպարապետն Հայոց  
կ'ընդդիմանայ ուրացութեան. բայց երբ նախարար-  
ները կը դնեն իր առաջ երկրին սպանացուած  
մարմինը, կը զիջան ուրանալ անոնց հետ կեղծօք:

13. Սիւնիք անջատուած, «ապստամբած»  
էր հայկական միութենէն, ենթարկուած էր  
Ատրպատականի սպայապետութեան:

14. Նախարարներն եւ եպիսկոպոսները  
կ'ուխտեն սուրբ միութիւն: Վարդան Մամի-  
կոնեանն է ուխտապահներու սպարապետը:  
Դոնէն գուրս (Արտաշատ) տեղի կ'ունենայ  
զօրահանդէս:

15. Սուրէն «չնայր ընդ կանայս աղա-  
տաց, ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ»:

16. Կաթողիկոսն եւ նախարարները կը  
ներկայանան միւսանգամ Մարզպանին եւ կը  
սպառնան:

17. Վարդան կը յարձակի Դոնի վրայ,  
ուր էր Մարզպանը. կը սպանուի Սուրէն. կը  
կտորուին պարսիկ զօրքերը. կը քանդուի  
ատրուշանը:

18. Աղուանք կը մասնակցի հայկական  
ապստամբութեան: — «Յորժամ սպանին  
զՍուրէն, ի նմին ամի եկն Վարդան Վչնասպ  
ունն» (Սեր.):

19. Հայկական պատգամաւորութիւն մը  
կը խնդրէ Յուստինոս Բ.էն օգնութիւն. կը

16. Նախարարներն եւ Սեպուհները կ'ուրանան  
կեղծօք. կ'ընդունին մոգութիւնը:

17. Աշուշայ Վրաց բղէլին եւ Վասակի երկու  
որդիք՝ Բարիկ եւ Ատրնեսոս (տպ. Ամիր-Ներսէ) կը  
մնան պատանդ (55). նախարարները կը վերադառնան  
իրենց տեղերը: Մոզերու մեծ թիւ մը կ'ընկերանայ  
չուին:

18. Նախարարներու ժամանումը կ'ողջունուի  
սպազգած:

19. Վարդան չի հանդուրժեր ստեղծուած կա-

տանի անցքերը եւ խնդրելու օգնութիւն.  
Թէոդոս կայսր կը միտի խորհիլ այս մասին.  
բայց վաղահաս մահը կը խափանէ իրազօր-  
ծութիւնը. իսկ «անարին» Մարկիանոս կը  
մերժէ տալ օգնութիւն:

20. Հայք երեքի կը բաժնեն բանակը. ա-  
ռաջին գունդը՝ Ներշապուհ Ռմբոսեանի  
հրամանատարութեան տակ կը քայլէ դէպի  
Հեր եւ Չարաւանդ, երկրորդը՝ Վարդան  
սպարապետի տակ կը դիմէ Աղուանք, խա-  
փանելու ճորայ Մարզպանին՝ Սերուխտին  
անցքը Կուրի վրայէն. երրորդը կը յանձնուի  
Վասակին, հսկելու միջաշխարհին վրայ  
(56—57):

21. Վասակ կը մտնէ Վարդանի ծրա-  
գիրն եւ ոյժը Սերուխտին: Խաղիւսաղի առջեւ  
կը բախին Պարսիկք եւ Հայք: Վարդան կը  
պնդի պարտուած թշնամույն ետեւէն. կը  
յառաջանայ մինչեւ Հոնաց պահակը. կը հա-  
լածեն պարսիկ պահապանները. կը յանձնեն  
պահակը աղուան Վահանին. սա կը խնդրէ  
Հոնաց օգնութիւնը, որոնք կը խոստանան  
օգնել (58—60):

22. Վասակի դաւաճանական եւ թշնա-  
մական զորքերու մասին կը հասնին Վար-  
դանին լուրեր: Վարդան կը դառնայ Այրա-  
բատ. Վասակ կը փախչի Սիւնիք. ուխտա-  
պահներու գունդ մը կը զործէ յարձակում  
Սիւնիքի վրայ. Սիւնիք կը մասնուի սովի:

23. Եպիսկոպոսները կը հրամայեն քա-  
ղոց ամիսն ծոմապահութեամբ անցնել. կը  
զրեն Կ. Պոլիս, որ աղօթեն. «որպէս սկսաքս՝  
ի նմին եւ կատարեսցուք» (62):

24. Պարսիկ կալանաւորներէն մին կ'ար-  
ձակեն Դուռը, որպէս զի պատմէ ճշդիւ  
Հայաստանի անցքերը՝ «զիրան ապստամբու-  
թեան» ի նպաստ Հայոց: Կ'ուղարկէ նաեւ  
Վասակ գուժիկան առ թաղաւորն (62):

25. Թագաւորը կը գտնուէր իւր ձմե-  
րոցը, այն ինչ զարձած կորակոր Քուչաննե-

խոստանայ ենթարկել Հայաստանը Կայսեր  
իշխանութեան: Յուստինոս Բ. որ աժգոս  
էր 562ի խաղաղութեան դաշնագրութենէն,  
կ'ողջունէ հայկական ապստամբութիւնը. կը  
խոստանայ զինուորական օգնութիւն: Կար-  
նոյ Յունական բանակը հրաման կը ստանայ  
մտնել Պարսկահայաստան:

22. Հայկական եւ յունական միացեալ  
բանակները կը յառաջանան միջամուխ մինչեւ  
Սիւնիք, Աղուանք, Ատրպատական:

23. Յաղթութեան լուրերը կը հասնին  
Կ. Պոլիս Կայսեր եւ հայ փախստականներուն:

24. Նախարար մը, որ կ'երթար գաղտ  
հայկական ապստամբութիւնը գուժելու Սոս-  
րովին, կը հետապնդուի Չաւրակ Կամսարա-  
կանէն:

25. Հայաստանի ապստամբութիւնը նշան  
էր 50ամեայ դաշնագրութեան լուծման:

23. Վասակ տկամոյ կը հաւանի. կը ջանայ յի-  
ասնել ապստամբութիւնը. «մի վասն որդւոյ իւրոց,  
որք ի զրանն էին եւ զարձեալ զի եւ կեանք իւր իսկ  
ի խնամս չարին միտէին հանապաղ» (61):

24. Ռամիկ զօրաց բաղձութիւնը կը դիմէ «ի  
տուն մոխրանոցին, չմնալով աւաղացն հրամանի, եւ  
առեալ զհրակարանն՝ վարեցին ի Չուրան զհրական»...  
(63):

25. Յաջորդ օրը Չարեհաւանին մէջ կը կոտո-  
բուին մոգերը (63):

20. Վասակ եւ այլ նախարարները կը խոսովին.  
կ'ուղարկեն սպարապետի ետեւէն պատգամաւորներ՝  
եւ կեցնելու. կը խոստանան միաբան ուժով ընդդի-  
մանալ թագաւորին, ապստամբել:

21. Վարդան կը զիջանի. կը վերադառնայ Բա-  
ղրեւանդէն:

22. Նախարարակոյտ ժողովին մէջ կ'որոշուի  
ապստամբութիւնը: Կ'ուխտեն սուրբ միութիւն:

րու պատերազմէն: Հայաստանի ապստամբութեան մասին լսելով պարսկէն, կը ցնցուի: Կը զգայ թէ այսու «եղին փնասք մեծամեծք ի սահմանն ի մէջ երկուց անհաշտ թշնամեաց» (64):

26. Մոզերը խորհուրդ կու տան դադրեցնել հալածանքը. թոյլ տալ որ քրիստոնեաները ապրին իրենց օրէնքով. «գոքօք պապստամբսն անցես ի հաւանութիւն»: Կը զրկուի անյիշաչարութեան եւ զիջման հրովարտակ (64—66): Հայք չեն հաւատար թագաւորին խաղաղասիրութեան:

27. Կ'ուզարկէ թագաւորն առ Մարկիանոս դեսպան, իմանալու Կայսեր արամադրութիւնը:

28. Թագաւորը կ'արձակէ իւր հաղարայետը՝ Միհր-Ներսէս յաղթ բանակով, «բազում երամակս փոյց յղէր ընդ նմա»: Հաղարայետը կը հասնի Փայտակարան (67/68):

29. Հաղարայետը իր քով կը կանչէ Վասակ Սիւնին, որ «որպէս նորա իսկ յառաջագոյն դատեալ եւ որոշեալ էր ի միաբանութենէն Հայոց, եկն եւ յանդիման եղեւ» հաղարայետին ի Փայտակարան (70): Վասակի ուրացութիւնն եւ ուխտապահներու դէմ լաւած դաւերը (70—71):

30. Վասակ գունդեր կը կազմէ: Վրաց աշխարհը կը բաժնէ Հայերէն: Կը խախտեն Աղուանները օգնել Հայոց: Կը կասեցնէ Աղանաց բղէջի օգնութիւնը: Կը դրէ թղթեր Յունաց բաժինը. ուր կը գտնէ իրեն գործակից եւ խորհրդակից Վասակ Մամիկոնեանը՝ Մտորին Հայոց սպարապետը: «Չամենայն զօրսն Յունաց յերկրայս արար յուխտէն»: Հոնաց Պահակը կը զօրացնէ պարսկական նոր զօրքով (73): Կ'երկայտակէ Հայկական բանակը: Իր երկու եղբորորդիք, որոնք «յուխտ

Ստորով կը ցնցուի Հայաստանի հասած լուրերէն:

26. Ստորով թէպէտ կը խոստանայ (Սերուխով խորհրդով) Հայոց ամէն զիջողութիւն, բայց չի գտներ հաւատ:

27. Սերուխով կ'ուզարկուի Կ. Պոլիս լրտեսելու Կայսեր արամադրութիւնը: Յուստինոս կը յայտարարէ թէ ինքը պիտի պաշտպանէ քրիստոնեայ Հայաստանը:

28. Միհրան Միհրեանդակ անթիւ զօրքով եւ շատ փղերով կ'ուզարկուի Հայաստան: Սաղամախիքի մօտ կը խորտակուի հայկական բանակէն:

29. Փիլիպպոս Սիւնեաց տէր որ «յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց կացեալ էր ի Հայոց». կ'արշաւէ ի Հայս:

30. Գուրգէն Վրաց թագաւորն, որ զինակից էր Հայոց, կ'անցնի Կ. Պոլիս: Ուխտի բանակին մէջ ծայր կ'առնէ երկպառակութիւնը. բանակը սոճիկին անկանոն վճարումի պատճառաւ կ'ըմբոստանայ. տեղի կ'ունենան անկարգութիւններ:

26. Հայաստան ապստամբած էր: Գուրգէն կը հասնի Գուրգէն. Միհր-Ներսէս բանակով կու գայ Փայտակարան. որպէս զի Աղուանքի վրայէն արշաւէ Հայաստան:

27. Հայերը կը փութան պատգամաւորութիւն յղել Կայսեր. կը խոստանան ենթարկուիլ Կայսեր: Կ'ուզարկուին թղթեր առ բղէջին Աղանեաց, առ իշխանն Անդեղ տան, Մոսկոս, Հաշանից, Եկեղեցայ եւն. նաեւ առ մեծ սպարապետն Անտիոքայ (63):

28. Պատգամաւորներն են. Վահան Ամատունի, Հմայեակ Մամիկոնեան եւ Մեհրուբան Արծրունի (63):

29. Թէոփոս Բ. «յանձն անոց օգնել նոցա զնոյն». բայց «միջոցեւ պատրաստէր զիրս խոստմանն» կը վախճանի († 450, Յուլիս 2): Յաջորդն՝ Մարկիանոս խորհրդով «Անտոքեայ, որ ի ժաման սպարապետ էր Անտիոքայ, եւ Փղորենտի ասորւոյ, որ էր աւագ զբանն թագաւորին», չ'առնէր յանձն լուծել 421ի խաղաղութեան դաշինքը «զոր ի բազում ժամանակաց զրեալ եւ կնքեալ է առաջին թագաւորացն» (74):

30. Նախարարները կ'որոշեն խախտել պարսկական սլախն անցք Կուրի վրայէն. Վարդան կ'ուզարկուի զօրացունդով Աղուանք:

տին» էին, կը հարածէ Սիւնիքէն: Կը հարած է նաեւ միայնակեացները:

31. Միհր-Ներսէս կը կարգէ պարսկական բանակին հրամանատար Մուշկան Նիւսալաւուրտ եւ ինքը կը վերադառնայ առ թագաւորն, զեկուցանելու իրաց դրութիւնը (75):

32. Վարդան թէպէտ կը զգայ թէ նախարարներու միութիւնը երկպառակած է, բայց չի սասանիր, որովհետեւ իր ձեռքն էր միջնաշխարհը. «քանզի ինքն իսկ դեռ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն... զի դեռ եւս ինքն ունէր զամենայն աշխարհն»: Արտաշատի մէջ զօրահանդէս կ'ընէ:

33. Կը շարժէ բանակը Արտազ, հանդիպելու Մուշկան Նիւսալաւուրտին, որ կու գար Փայտակարանէն: Իր բանակին մէջ են Ղեւոնդ երէց եւ Յովսէփ: Աւարայրի զիւղին մօտ տեղի կ'առնեն երկու բանակները դէմ առ դէմ: Կը յօրինեն ձեւատ: Կը բախին իրարու ձեւատները: Վարդան կ'իյնայ, 287 քաջարի նահատակներու հետ. քնացեալները կը զիմեն ի փախուստ: Կը հետապնդէ թշնամին. կը կոտորէ 740 հոգի: Պարսիկը կը սանի յաղթութիւնը 3544 հոգի տուժելով իւր բանակէն:

34. Չախողած էր հայկական ապստամբութիւնը:

35. Մուշկան Նիւսալաւուրտ Վասակի առաջնորդութեամբ կը նուաճէ բերդերը: Ապստամբ նախարարները եւ քահանաները ի Դուռն կը կանչուին: Կ'երթայ հոն նաեւ Վասակ: Քահանաներն եւ նախարարները կը դատապարտուին կապանքի. կը դատուի նաեւ Վասակ եւ կը դրուի բանա, ուր եւ կը վախճանի յետին տառապանքներու մէջ:

31. Վասակի մտանութեամբ իրազգած կ'ըլլան պարսիկները Վարդանի յառաջխաղացութեան. կը կանխեն անցնիլ Կուրը:

32. Սաղամախ զիւղի մօտ կը պատահի Վարդան պարսկական բանակին, Նիխորականի հրամանատարութեան տակ: Կը բախի թշնամուցն եւ կը ստիպէ նահանջել. Նիխորական մեծ կորուստով տեղի կու տայ:

33. Միւս օրը Վարդանանք կը հետապնդեն փախտական թշնամին Կուրի միւս կողմը. կը յառաջանան մինչեւ Հոնաց պահակը. կը կոտորեն հոն պարսիկ պահակազօրը. եւ կը յանձնեն պահակին պահանջութիւնը Աղուան Վահանին, յանձնարարութեամբ որ բանակից Հոնաց հետ (66): Վստահացուցած էր Վասակ թէ էր անձնական ծանօթութիւններուն եւ

31. Տամ-Ստորով կը յարձակի Ուխտի բանակին վրայ. կը քայքայէ, կը ցրուէ:

32. Պարսկահայաստան յետս կը նուաճուի: Վարդան հայ բանակով կ'անցնի հոովմէական բաժին:

33. Ստորով անձամբ Միջագետք կու գայ անհամար բանակով: Կը գրաւէ Դարան: Կ'ապստակէ քաղաքներ: Մելիտինէի առջեւ կը պատահի հոովմէական-հայկական բանակին: Կը կանգնին բանակները դէմ առ դէմ: Ստորով զիջեալառան կը զիմէ փախուստի: Եփրատի ափանց վրայ Մելիտինէն ոչ շատ հեռու կը բախի Վարդանի հետ. կը խորտակուի թագաւորին ոյժը. եւ տկար մնացորդով կը փախչի ընդ Աղձնիս:

35. Պատերազմները կարճատեւ ընդհատումով կը շարունակուին մինչեւ 590:

զրամի շնորհիւ կարելի էր շահել Հոներու բարեկամութիւնը եւ նիդակակցութիւնը (83):

34. Երբ դեռ Աղուանից կողմերն էր Վարդան, լուր կը հասնի թէ Վասակ, որ կը գտնուէր միջնաշխարհին մէջ, ապստամբած է «ի միաբանութենէն», իրեն հետ նաեւ ուրիշ նախարարներ. եւ թէ «զեկուցան սրճակեցին ի Պարսս եւ նամակօք ուխտազրկեցին ընդ նոսա» (67):

35. Վարդանանք կը վերադառնան Այրարատ՝ ձմերկու հոն:

36. Վասակ թղթերով կը ջանար համոզել իշխաններն եւ շինականները, եւ քահանաները, որ արքայից արքայն «զքրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի եւ զվնաս կոտորածի մողուցն չ'ինդրէ». կը յորդորէր հետո կենալ «ի բանից Վարդանայ»: Երեք քահանայ կը գործակցին Վասակին (68):

36. Յազկերտ իւր թագաւորութեան ԺՁ. տարւոյն կ'արշաւէ Գուշանաց դէմ: Կալա- նաւոր նախարարներն եւ քահանայք կը պա- հուին ի Նիւշապուի: Քահանաներէն երկուքը կ'ընկերանան կարաւանին:

37. Բէլ անուն հոն մը տեսնելով քրիս- տոնեաներու կրած հալածանքը՝ փախտա- կան կ'երթայ Գուշանաց թագաւորին եւ կը պատմէ Յազկերտի արշաւանքի, բանակին երկպառակութեան, Հոնաց պահակին խրա- մատութեան մասին:

38. Յազկերտ կը յաղթուի Գուշանայ թագաւորէն: Մոգերը պարտութիւնը կը վե- րագրեն քրիստոնէից: Հրաման կ'ելլէ նահա- տակել Քահանաները:

39. Մոգպետը, որուն յանձնուած էին կալանաւորները, սքանչելեօք կ'ընդունի քրիստոնէութիւնը: Կ'աքսորուի հրամանաւ թագաւորին:

40. Քահանայք կը հարցաքննուին Ղեւոնդի եւ Սահակի շատագովականները: Քահանայք կը նահատակուին ի Նիւշապուհ: Անուանացանկ (139): Խուժիկը կը գողնայ նշխարները:

41. Խորէն եւ Աբրահամ աշակերտներն Ս. Քահանայից խեղանգամ կ'աքսորուին Է Շահուղ Ասորեստանի: Խորէն կը վախճանի: Աբրահամ կը դառնայ Հայաստան: Ներքող իր առաքինի վարքին:

42. Անուանացանկ խոստովանող նախա- րարներու (150): Ինը տարի եւ վեց ամիս կը մնան ի կապանս: Հաղարապետը, «թէպէտ փոխեցաւ նա ի գործոյ հազարապետութեանն արքունի», կը կապէ սէր նախարարներու վրայ, կը ջատագովէ զանոնք:

43. Հարեւըղոմ Շապուհ մեծ իշխանը կը խնդրէ անոնց համար թագաւորին չորհրդով:

37. Չափիկը տօնուած էր արդէն երբ լուր կը հասնի թէ պարսկական բանակ մը կը յառաջանայ Հէր եւ Չարաւանդ դժով դէպի Այրարատ: Վարդանանք կ'աճապարեն ելլել ընդ առաջ արդեւելու Հայաստան մուտքը:

38. Արտաղ գաւառի Աւարայր գիւղի մօտ, Տղմուտի հովտին մէջ կը սպասէր Մուշկան Նիւսաւա- տար Վարդանի զնդին: Թէպէտ թուով շատ սակա- ւածեան էր հայկական զօրագունքը, բայց եւ այնպէս կը ճակատի Վարդան: Պենտեկոստէի առաջին ուրբաթ օրն էր: Կը բախին ճակատները: Հայք կը կոտորու- ըն իրենց հետ: Սպարապետն Վարդան կ'իջնայ խոս- տորդի մէջ. իրեն հետ 276 քաջեր: Յազկերտի զորքը կ'ընկերանան Վարդանին էր, զնուած 3544 կորուստով: Հայ վախճա- րարի կին էր, զնուած 3544 կորուստով: Հայ վախճա-

36. Վարդան ընտանեօք կը վախճի Կ. Պո- լիս: Իրեն հետ շատ նախարարներ եւ Եկե- ղեցականներ:

37. Մոգպետը, որուն յանձնուած էին կալանաւորները, սքանչելեօք կ'ընդունի քրիստոնէութիւնը: Կ'աքսորուի հրամանաւ թագաւորին:

38. Յազկերտ կը յաղթուի Գուշանայ թագաւորէն: Մոգերը պարտութիւնը կը վե- րագրեն քրիստոնէից: Հրաման կ'ելլէ նահա- տակել Քահանաները:

39. Մոգպետը, որուն յանձնուած էին կալանաւորները, սքանչելեօք կ'ընդունի քրիստոնէութիւնը: Կ'աքսորուի հրամանաւ թագաւորին:

40. Քահանայք կը հարցաքննուին Ղեւոնդի եւ Սահակի շատագովականները: Քահանայք կը նահատակուին ի Նիւշապուհ: Անուանացանկ (139): Խուժիկը կը գողնայ նշխարները:

41. Խորէն եւ Աբրահամ աշակերտներն Ս. Քահանայից խեղանգամ կ'աքսորուին Է Շահուղ Ասորեստանի: Խորէն կը վախճանի: Աբրահամ կը դառնայ Հայաստան: Ներքող իր առաքինի վարքին:

42. Անուանացանկ խոստովանող նախա- րարներու (150): Ինը տարի եւ վեց ամիս կը մնան ի կապանս: Հաղարապետը, «թէպէտ փոխեցաւ նա ի գործոյ հազարապետութեանն արքունի», կը կապէ սէր նախարարներու վրայ, կը ջատագովէ զանոնք:

43. Հարեւըղոմ Շապուհ մեծ իշխանը կը խնդրէ անոնց համար թագաւորին չորհրդով:

37. Չափիկը տօնուած էր արդէն երբ լուր կը հասնի թէ պարսկական բանակ մը կը յառաջանայ Հէր եւ Չարաւանդ դժով դէպի Այրարատ: Վարդանանք կ'աճապարեն ելլել ընդ առաջ արդեւելու Հայաստան մուտքը:

38. Արտաղ գաւառի Աւարայր գիւղի մօտ, Տղմուտի հովտին մէջ կը սպասէր Մուշկան Նիւսաւա- տար Վարդանի զնդին: Թէպէտ թուով շատ սակա- ւածեան էր հայկական զօրագունքը, բայց եւ այնպէս կը ճակատի Վարդան: Պենտեկոստէի առաջին ուրբաթ օրն էր: Կը բախին ճակատները: Հայք կը կոտորու- ըն իրենց հետ: Սպարապետն Վարդան կ'իջնայ խոս- տորդի մէջ. իրեն հետ 276 քաջեր: Յազկերտի զորքը կ'ընկերանան Վարդանին էր, զնուած 3544 կորուստով: Հայ վախճա-

41. «Ատորթիկը ոմն անուն, յաշխարհէն Հայոց» կը կարգուի մարգարէն աշխարհին: «Բագում թուրքի խաղաղութեան առնէր ի տեղիս տեղիս Հայոց աշ- խարհին», յորդորելով որ վերագոռնան փախտա- կանները եւ ապրին՝ անձնատուր խաղաղ կեանքին:

42. Նախարարներն, որոնք ամբացած էին Տայոց եւ այլ գաւառներու բերդերու մէջ, կը հրապարակ- խոստովանուին: Եւ կը կալանաւորէ. ի միտին կ'ու-

Յազկերտ «գրեաց եւ յանձն արար մեծ սպա- րապետին զի ընդ զօրս արքունի երթիցեն ի գործ պատերազմի»: Կը գործեն քաջութիւն- ներ: Կը խոստանայ Յազկերտ պատուով ու- ղարկել զանոնք հայրենիք:

44. Յազկերտ իւր թագաւորութեան ԺԹ. տարւոյն կը վախճանի: Երկու որդիք «ի վրայ տերութեանն կուռէին» երկու տարի: Այս միջոցին Աղուանից թագաւորը կ'ապր- ստամբի:

45. Ռահամ ի Միհրան տոհմէ, դայեակն Յազկերտի կրտսեր որդւոյն կը յարձակի երէց որդւոյն վրայ. «Եւ ձերբակալ արարեալ գորդի թագաւորի, անդէն ի տեղուջն հրա- մայէր սպանանել»: Պերոզ կը թագաւորէ (151):

46. Աղուանից թագաւորը օգնութեամբ Մաքթիաց 11 թագաւորներու կ'ընդդիմանայ Պարսից: Տարի մը կը շարունակուի կռիւը. Պարսիկները զօրք կը հանեն Խայլան- դրաց աշխարհէն: Կը նուճուի Աղուանից ապստամբութիւնը: Թագաւորը կ'ընտրէ մե- նակեցական կեանք (184/5):

44. Վասակ կը դատուի: Կը յայտարարէ Յազ- կերտ. «բայց զայս դիտեա, զի յայտ հեռէ Սիւնեաց տէր չես» (83—85): «Եւ ի նմին աւուր զթշնամին նորա՝ զեւրոսն սիւնի, զուրացողն Վարդավազան տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց կացուցանէին»:

45. «Վասակ կացեալ ի Դրանն ամս ինչ կարի վշտաղին եւ նեղութեամբ բազմաւ» կը վախճանի «անդէն յերկիրն Պարսից»:

46. Քահանայք կը դատուին նոյնպէս. կը յար- զորուին յուրացութիւն. բայց կը մնան անշարժ. կը պահուին կալանաւոր:

47. Յազկերտ իւր թագաւորութեան ԺՁ. տար- ւոյն (453/54) կը չուէ Գուշանաց դէմ. կը պարտուի: — Ճանապարհէն կարաւանին կ'ընկերանան Քահանայք մինչեւ Նիւշապուհ քաղաք:

48. Թագաւորին պարտութեան պատճառը կը համարին մոգերը «աստուածապան» քահանաներու

դակ, Ռափիկ ի Միհրան տոհմէ. կը հռչակէ ինք զինք թագաւոր: Միացուցած իր բանա- կին հետ հիւսիսային ազգերը կը քայլէ Որմզդի վրայ: Վստամ որդի Ասպարապետի, եղբայր Վնդայի կը բանտարկէ զՈրմզդի. կը վորէ անոր երկու աչքերը, ապա նաեւ կը սպաննէ: Կալանաւորները կ'արձակուին բանտէ: Խոս- րով, Որմզդի որդին կը կապէ թագ, եւ Վահրամի հզօր բանակին առջեւ տեղի տալով կը զիմէ Կայսեր՝ խնդրելու օգնութիւն: Յու- նական բանակի օգնութեամբ եւ Վստամի ձեռնտուութեամբ կը խորտակէ Վահրամի ոյժը. կը տիրանայ գահին: Վահրամ Չորին կը փախչի Խազարներու աշխարհը եւ հոն կը սպանուի: Այժմ ապստամբութեան դրօշ կը պարզէ Վստամ. կը հռչակէ ինք զինք թա- գաւոր երբեւ Պերոզ-Վստամ. հինգ տարի կը տեսնի կռիւները. Խոսրով կը տանի յաղթու- թիւնը (595): Վստամի բանակին մէջ կը տեսնուէին Դեւուք, Թուրքեր, եւ ուրիշ հիւսիսային ազգեր:

46. Վահրամ Չորին «հարկանէր քաջու- թեամբ իւրով զզօրս Թեաւալայուց... եւ Գու- շանաց... արարեալ... պատերազմ ընդ մեծի արքային Մաքթիաց... եւսար զբազմութիւն զօրացն. եւ սպան զթագաւորն ի պատե- րաղի» (ՍԵՐ. 30): Վերոյ Աղուանից Կա- թողիկոս «յանցական գտեալ ընդ ապստամ- բողս մեծամեծաց իշխանաց աշխարհին Աղու- անից, որք ապստամբեցան յարքայէն Պարսից

կենդանութիւնը. կը պահանջեն թագաւորէն անոնց մահը (87):

49. Ղեւոնդեանք կը նահատակուին Նիւշապուհ քաղաքի մօտ, Ռեւան(ը) գիւղէն ոչ շատ հեռու:

50. Աբրահամ եւ Խորէն ահանջատ կ'աքսորուին Ասորեստան, ի դաւան Շախուլ: Խորէն երէց կը վախճանի աքսորի մէջ: Աբրահամ կը վերադառնայ Հայաստան, կը կարգուի Եղիսկապոս Բղնունեաց (106):

51. «Կեցեալ Յազկերտի... զչափ ժամանակի կենաց իւրոց՝ վախճանէր ի Փառսում: Եւ թագաւո- րեցին նորա երկու որդիքն, հակառակելով ընդ մի- մեանս. եւ դիմեալք ի վերայ միմեանց պատերազմաւ՝ յաղթահարեալ սպան կրտսերն զաւագն եւ ինքն թա- գաւորեաց, որում անունն էր Պերոզ»:

52. Պերոզ թագաւորութեան Ա. տարին կը հանէ բանտէն նախարարները. եւ կը հրամայէ ժամանակ մը ծառայել բանակին մէջ (108):

53. Հրեւ-Շնոմապուհ, իշխանն Հրեւայ, «սի- րէր զկապեալուն Հայոց», եւ կը բարեխօսէ անոնց հա- մար (108):

54. Պերոզի Չ. տարւոյն կը վերադառնան նա- խարարք հայրենիք (110):



4. Արմաշի Դպրեվանքի ձեռագիրը, յամէ 1671. Կից Մ. Խորենացի<sup>5</sup>:

5. Կ. Պոլիս, Ազգային Մատենադարան, Թ. 136, Գէորգ զպրի օրինակութիւնն 1781էն, օրինակուած ի Մեծն Հայաստան, ՈԺՁ թուին (1167) գրուած ձեռագրէ մը<sup>6</sup>: Ասոր վրայէն կատարուած է Կ. Պոլսոյ 1823ի տպագրութիւնը եւ Վենետիկի Ա. օրինակի բաղդատութիւնը:

6. Ամիրտօրու վանքին ձեռագիրը, յամէ 1130, սկիզբը սրակաս<sup>7</sup>:

7. Խաչիկ վարդապետի Ձեռագիրը, Թ. 80, 182 ա—176 բ, ԺԵ. դարէ<sup>8</sup>:

8. Էջմիածին, Պետական Ձեռագրատուն: Բազմաթիւ ձեռագիրներու մէջէն կը յիշեմ ա—է իմ կազմած համառօտ ցուցակէն. մնացածները Կարինեանի ցուցակէն (= Կ.). առնթեր կը նշանակեմ նաեւ հին թուերը. փակագծի մէջ առնուած է ձեռագրին գրչութեան տարին:

ա. Թ. 573 (Կ. 511 = 524), 388 բ (ԺԵ. դար):

բ. Թ. 1890 (Կ. 1645 = 1687), 1 ա (1172)<sup>9</sup>:

գ. Թ. 1404 (Կ. 1345 = 1381), 473 ա (1676):

դ. Թ. 1458 (Կ. 1618 = 1660), 246 ա (1705)<sup>10</sup>:

ե. Թ. 1482 (Կ. 1619 = 1661), 332 ա (1678)<sup>11</sup>:

զ. Թ. 2559 (Կ. 1641 = 1683), (ԺԵ. դար):

է. Թ. 2639 (Կ. 597 = 611), 282 բ (1672)<sup>12</sup>:

ը. Կ. 1615 = 1657 (1570):

թ. Կ. 1620 = 1662 (ԺԵ. դար)<sup>13</sup>:

ժ. Կ. 1625 = 1667 (1641)<sup>14</sup>:

ժա. Կ. 1643 = 1685 (1207)<sup>15</sup>:

ժբ. Կ. 1644 = 1686 (1675)<sup>16</sup>:

<sup>5</sup> Կիւլէտէրեան՝ Եղիշէ, էջ 45—49:  
<sup>6</sup> Կիւլէտէրեան, անդ, էջ 9:  
<sup>7</sup> Կիւլէտէրեան, անդ, էջ ԺԹ—ԻԳ:  
<sup>8</sup> Թօփիսեան, Յուլիանի ձեռագրաց Գաղեան Խաչիկ վարդապետի. Վաղարշապատ 1898, էջ 99:  
<sup>9</sup> Հմմտ. Գ. Եպ. Յովսէփեան, Քարտէս Հայ հնագրութեան, էջ 30 եւ նկար 62:  
<sup>10</sup> Հմմտ. Ազգայնագիտ., Տիգրիս 1909, էջ ԺԷ:  
<sup>11</sup> Անդ, էջ ԺԵ. Խորենացի էջ ԻԱ. եւ Zeitschrift für armenische Philologie, 1904, էջ 269—270:  
<sup>12</sup> Հմմտ. Խորենացի, էջ ԺԵ—ԺԶ:  
<sup>13</sup> Անդ, էջ ԺԷ:  
<sup>14</sup> Տես անդ, էջ ԺԶ—ԺԷ:  
<sup>15</sup> Անդ, էջ ԺԸ:  
<sup>16</sup> Հմմտ. Հ ա ն դ. Ա. մ. 1902, էջ 318:

9. Թաւրիզի Բերդաթաղի Մատենադարանին Թ. 22, 105 բ—185 բ (1689էն յառաջ), Կից Մ. Խորենացի. հմմտ. Աճառեան՝ Յուլիանի հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա 1910, էջ 20: Անդ, Թ. 48, էջ 636 ա—646 ա (Յայտմաւուրք յամէ 1438) հատուածներ (Յուլիան, էջ 40):

10. Անձեւացեաց օրինակը: Խորէն Վ. Գալֆայեան կը գրէ այս օրինակի մասին. «Դէպ եղեւ ճանաչել մեզ անդանօր (ի Պարիս) զհնասէր ոմն այր պատուական Սըր Զառուայթ անուն, որ անտի անցանէր ի դարձին յարեւելից, եւ բարձեալ բերէր ճոխութիւն բազում հնութեանց զորս ամբարեալն էր ի մերոց եւ յայլոց կողմանց Ասիացոց աշխարհին: ... Տեսաք ի գրչագիրս նորա եւ Պատմութիւն մի Վարդանանց, որ թէպէտ չունէր ի վերայ զթուական գրութեանն, այլ մազաղաթն եւ երկաթագիր տառիցն ձեւք, որովք հարեալ էր ի գրի, շատ իսկ ցուցանէին եթէ յոյժ հնոց ժամանակաց էր մատենան. եթէնորդ կամ ութերորդ դարու գործ, եթէ ոչ եւ առաւել եւս հնագոյն: Եւ բանիս վկայք՝ յիշատակարանքն որ այսր եւ անդր ի լուսանցս մատենին տեսանէին՝ հասանէին ցիւններորդ դար. որպէս օրինակ իմն. «ԶՏէրն Անձեւացեաց զմեծն Ատոմ յիշատակի արարէք արժանի»...<sup>17</sup> ի վերջ կոյս գրոյն գտաք զայս յիշատակարան. «Գրեցաւ ի ստոյգ պատմ. տանն Մամիկոնեանի (°) հրամանաւ Ծմաւոնի Անձեւացեաց տեանն, յիշատակ եւ բարեխաւս աշխարհիս»: ... Յէջս գրոյն աստ եւ անդ գտանին անուանք... «Գրուրդէն յիշեցէք. Գէորգ Անձեւացեաց. Հասան տէր Անձեւացոց»:

Այս օրինակ Անձեւացեաց թուի անցեալ կամ պահեալ ի Նարեկայ վանս. զի անդ ուր յիշատակէ Եղիշէ յանուանս Եպիսկոպոսացն որք պատասխանեցին նամակին՝ զԵղարայր Եպիսկոպոս Անձեւացեաց, յօրինակին գտաք յայլմէ գրչէ<sup>18</sup>. «Զորոյ զաթոնն վիճակեալ

<sup>17</sup> «Թէպէտ չզուցէ տարւոյն թիւ, բայց անուան թուի մեզ եթէ այս այն Ատոմ իցէ գոր եւ Յովհաննէս պատմարան կաթողիկոս անուանէ «Մեծ», յորժամ ասիցէ. «Պայազատէր զտէրութիւնն զայն Մեծն Ատոմ որդի նորա (Գորգեանայ) ընդ նորա: Եւ զի առ Սմբատաւ Ա. Բազրատունեաց թագաւորան, փայլեցաւ այս Ատոմ, ապա հնագոյն քան զնա իցէ գրութիւն Վարդանանցն մատենի» (Գալֆայեան):  
<sup>18</sup> Անշուշտ նոյնպէս լուսանցքի վրայ «յայլմէ գրչէ»: Խորենացի Անձեւացի ձեռագրուած է Ժ. դարու երկրորդ քառորդին. կը գրէ իր մասին Անանիա Մոկացի. «Ի ՆԳ (954) թուականիս եւ ի ԺԳ. ամի մերոյ զիտաւս(պե)տութեանս յարեաւ ոմն Եպիսկոպոսաց

11. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

տէրս մեր Խորոյ»: Աներկբայ իմն թուի եթէ զմեծէն Խորոյս ահնարկիցէ գրեւն, զհօրէ լուսայնոյն Գրիգորի: Գոյ եւ այլ սխրալի իմն հակիրճ յիշատակարան... զի ուր Եղիշէ զանուանս քաջացն դրոշմէր արանց՝ որ զանուանս իւրեանց յերկնաւորն դրոշմեցին զպրութեան, յաւելոյր ոք ի ստորեւ կիտաղողով ձեռամբ եւ սրտիւ. «Մաղթեցէք վկայք Քրիստոսի խաղաղութիւն նեղելոցս եւ փրկութիւն աշխարհիս, եւ փանաք Գրիգորիս Պայգաւունեաց հաւատոս արիական եւ մի լոկ զանունք աշխարհուս<sup>19</sup>»:

Գալֆայեանի այս նկարագրութիւնը կասկած կ'արթնցնէ իմ մէջ. ամբողջ կեղծիք կը թուի: Անունները, որոնք յառաջ բերուած են Ձեռագրին յիշատակագրութիւններէն, փնտրուած ընտրուած անուններ կ'երեւան: Ձեռագիրը իւր արտաքին եւ ներքին յատկութիւններով այսքան խոր հնութեան կնիք չի կրեր. ոչ միայն ընթերցուածներն չեն այլուստ մեզ ծանօթ երկաթագիր հատակոտորներուն համապատասխան, այլ եւ արտաքինը կ'երեւցնէ հետքեր իր մէջ, որոնք Եղիշէի Պատմութեան 1828ի տպագրութեան ազդեցութեան տակ սկիզբ առած են: Ինձ կը թուի թէ Գալֆայեան հրատարակման ժամ, ճոխութիւն մը տալու համար իւր հրատարակութեան եւ ասով զայն Միխիթարեան հրատարակութեանէն զերազանց ընծայելու համար, հանած է հրատարակ «ըստ Անձեւացեաց օրինակի» ճոխ վերատառութեամբ: Ներքին առաւելութիւն մը չունի իր հրատարակութիւնը<sup>20</sup>: Կարող էր Գալֆայեան ունեցած ըլլալ աչքի առաջ ձեռագիր օրինակ մը, որուն հետեւած ըլլայ տեղիս տեղիս, բայց ոչ այնքան խոր հնութեան: Յամենայն զէպս Սըր Զառուայթի Ձեռագրին մինչեւ այսօր չէ յայտնուած որ եւ իցէ Մատենադարանի մը մէջ:

մերոց Խորոյ անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձեւացեացն, այր համեստ եւ զիտաւոր եւ այլօք ծերութեամբ զարգացեալ...»: Թուրք Անանիա Մոկացու, Արարատ 1897, էջ 276:  
<sup>19</sup> Եղիշէ, Պատմութիւն Վարդանանց. ըստ Անձեւացեաց օրինակի: Թէոդոսիա 1861, էջ Գ—Է:  
<sup>20</sup> «Անձեւացեաց օրինակը ծանօթ տպագրութիւններու կամ ձեռագիրներու մէջ թէ մատենագրական, թէ բանասիրական՝ հիմնական եղանակաւորում մը յառաջ բերելու հանգամանքէն զուրկ է»: Կիւլէտէրեան, Եղիշէ, էջ 42: «Անձեւացեաց օրինակի մասին հմմտ. անդ, էջ 41—45. եւ Բ ա զ մ ա Վ է պ, 1907, էջ 28—29»:

Անպատակ կը համարեմ նշանակել ցանկիս մէջ անստոյգ տպագրութիւնները, որոնք այլ եւ այլ տեղեր եւ այլ եւ այլ հեղինակներէ յիշուած են, յաճախ իրարմէ քաղելով:

1. Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք: Շարադրեալ գիտնական եւ խստակրօն սուրբ վարդապետին Եղիշէի, աշակերտի սրբոց թարգմանչացն մերոց Իսահակայ եւ Մեսրօպայ: Յորում լիակատար պատմին նահատակութիւնք սրբոց Վարդանանց զօրավարացն Հայոց եւ Ղեւոնդեանց սրբոց Քահանայից: ... Ի Կոստանդնուպօլիս Քաղաքի: Արղեամբք եւ ծախիւք սուրբ Էջմիածնի Միքայիլ Արքայապետի Վարդապետին: Ի թուականիս Հայոց ՌՄԺԳ (1764): Յապրիլի Ժ: Ի Տպարանի հանգուցեալ Աստուածատուրի: 8°, էջ 8 + 220: Հմմտ. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն, էջ 569—571:

2. Նոյն խորագրով՝ «վերստին տպագրեցեալ... հրամանաւ իշխանազնեաց Տեառն Յովսէփայ սրբազան Արքեպիսկոպոսի եւ առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ տէրութեամբ Ռուսաց: Սանկտպետերբուրգ 1787, 8°, էջ 413: Ղազիկեան կը նշանակէ 396 էջ: Հմմտ. եւ Մատենագիտութիւն, էջ 168 եւ Կ. Կոստանեանց՝ Լ ու մ ա յ, Ա. 1902, էջ 186, ծն.: Ես չեմ տեսած:

3. Պատմութիւն նահատակութեան սրբոց Վարդանանց, եւ Ղեւոնդեանց քահանայից. արարեալ սրբոյն Եղիշայի գերահօշակ վարդապետի եւ արք Եպիսկոպոսի Ամատունեաց, եւ աշակերտի երանելի թարգմանչացն մերոց սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ: ... Տպեալ ի Կոստանդնուպօլիս: Ի տպարանի մայր Եկեղեցւոյս սուրբ Աստուածածնի: Աշխատասիրութեամբ. Տ. Անդրէաս Վարդապետի Նարինեան | ակնեցոյ: | 1823. ՌՄՂԲ: | 8°, էջք 239:

Նոյնը հրատարակուած է նաեւ ճակատի վրայ առանց տպագրութեան տարին նշանակուելու: Վիեննայի Միխիթարեան Մատենադարանի միւս օրինակը վերջնաթեր տողերն ունի. Աշխատասիրութեամբ. Տ. Անդրէաս Վարդապետի Նարինեան ակ | նեցոյ | թուականը կը պակսի, լրացուած է ձեռագիր: Բնագրին ուրիշ կողմանէ յար եւ նման է միւս օրինակին:

4. Եղիշէի վարդապետի վասն վարդա- նայ եւ Հայոց պատերազմին: Ի Վենետիկ, Ի սուրբ Ղազար. ՌՄՀէ (1828), 12<sup>0</sup>, էջ 408:

5. Վենետիկ 1842, 12<sup>0</sup>, էջ 394:

6. Վենետիկ 1852, 8<sup>0</sup>, էջ 394:

7. Վենետիկ 1864, 12<sup>0</sup>, էջ 394:

8. Վենետիկ 1893, 12<sup>0</sup>, էջ 425:

9. Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդա- պետի մատենագրութիւնք. Ի Վենետիկ 1838, 8<sup>0</sup>, էջ 307:

10. Նոյնը «ըստ ընտրելագոյն ընթեր- ցուածոց գրչագրաց». Վենետիկ 1859, 8<sup>0</sup>, էջ 382:

11. Մոսկուա 1861, 18<sup>0</sup>, էջ 430<sup>0</sup>, տպագրատուն Յովհ. Բարայեան Գաթա- նեանց: Հմմտ. առ այս Brossetի յիշատա- կութիւնն Ի Melanges Asiatiques, IV (1862), էջ 668 եւ Միանսարեան, էջ 520: Ես չեմ տեսած:

12. Երուսաղէմ 1865, 12<sup>0</sup>, էջ 431:

13. Եղիշէի Պատմութիւն վարդանանց. ըստ Անճեւացեացն օրինակի: (Հրտ. Սորէն Վ. Գաթապեան:) Թէոդոսիա, Ի Սալիպեան տպարանին, 1861, 8<sup>0</sup>, էջ է + 344:

«Ըստ Անճեւացեացն օրինակի» կատա- րուած են նաեւ հետեւեալ հրատարակու- թիւնները, դոյնն փոփոխութեամբ:

14. Կ. Պոլիս, Գրատուն Փարիզու, 1866, 12<sup>0</sup>, էջ 456: (Ա.) տպ. Արամեանի:

15. Չմիւնիա 1867, փոքր 8<sup>0</sup>, էջ 224. տպ. Տէտեան: էջ 220—222. «Բացատրու- թիւն պարսկերէն եւ խրթին բառից ինչ մա- տենիս»:

16. Կ. Պոլիս 1871, 12<sup>0</sup>, էջ 474. «Բ. տպ.» Արամեանի:

17. Կ. Պոլիս 1871, փոքր 4<sup>0</sup>, էջ 130 երկսիւն. (Ա.) տպ. Յ. Գաթապեանի:

18. Կ. Պոլիս 1873, 12<sup>0</sup>, էջ 456. «Բ. տպ.» Յ. Գաթապեանի:

19. Տփղիս 1879, 8<sup>0</sup>, էջ 311, տպ. Հ. Էնֆիաճեանց (հրտ. Գ. Արքեպ. Այվա- զովսկի):

20. Մոսկուա 1892, 8<sup>0</sup>, էջ 2 + 392 «Ծանօթագրութիւններով եւ հայ-ուսերէն բառարանով Ի լոյս ընծայեց... Ս. Յովհան- նիսեանց 1»:

21. Տփղիս 1904, 8<sup>0</sup>, էջ 269 [= Ղու- կասեան, Մատենադարան, Ա.]:

22. Տփղիս 1914 (°), 8<sup>0</sup>, էջ 269 (°). [= Ղուկասեան, Մատենադարան, ԺԱ.]: Չունիմ առ ձեռն:

Եղիշէ Պատմութեան ընտիր հրատարա- կութիւն մը հոգաց Մ. Փորթուզալ Փաշա, որ լոյս տեսաւ յետ մահուան հրատարակչին խնամքով իր դստեր Աշխէն Փորթուզալի: Հրատարակութիւնս, որ ճոխացած է ընդար- ձակ Նախագրութեամբ մը եւ հարուստ ծա- նօթագրութիւններով, բնագիր ընտրած է Մխիթարեան տպագրիչ օրինակը՝ բազմա- տութեամբ Անճեւացեաց կոչուած օրինակին: Ձեռագրական համեմատութիւններ չեն կա- տարուած: Փորթուզալեանի այս աշխատու- թիւնը հրատարակ ելած է կրկին տպագրու- թեամբ: Առաջինը, որ ծանօթագրութիւն- ները կը կրէր իւրաքանչիւր յեղանակին վերջը, քիչ յետոյ ջնջուած է տպագրական ինչ ինչ անհարթութիւններու պատճառաւ: Երկրորդ տպագրութիւնը ծանօթագրութիւն- ները դետեղած է իւրաքանչիւր էջին ներքեւ: Կը յիշեմ հրատարակութիւններս Ա. եւ Բ. տպագրութիւն անուանելով:

23. Եղիշէ վարդապետի վասն վարդա- նայ եւ Հայոց պատերազմի. եւ ըննադատու- թիւնք Միքայէլ Փաշայի Փորթուզալ: [Ա. տպ.] Վենետիկ 1902, 8<sup>0</sup>, էջ ԺԱ. + 455:

24. Նոյնը [Բ. տպ.] Վենետիկ 1903, 8<sup>0</sup>, էջ 477:

Միանսարեան (էջ 519) կը յիշէ այս ցան- կէն դուրս նաեւ՝

ա. Նոր-Նախիջեան 1787<sup>2</sup> (իմա՝ Պե- տերբուրգ 1788):

բ. «Կ. Պոլիս 1813, 16<sup>0</sup>» (իմա՝ 1823):

գ. «Կալիպթա 1816». «Ձեռքում Աւե- տեանի տպարանում. ըստ օրինակի տպա- գրելոյն Ի Կ. Պոլիս 1813» (1823<sup>0</sup>):

դ. «Վենետիկ 1825» (Մխիթարեանց ա- ռաջին տպագրութիւնն է 1828. հմմտ. եւ Ղազիկեան, էջ 572):

= Էմիլ Տեզա հայագիտին քննադատութիւն Եղիշէի թարգմանութեան (°) վրայ: Բազմապէս, 1893, էջ 512—521: — Գր. Սալաթեանց՝ Մոսկու, 1892, էջ 934—948 (նաեւ առանձին՝ Տփղիս, 8<sup>0</sup>, էջ 15): Անդրադարձութիւն մ'առ այս հրատարակչէն՝ Ար- ձապեանք, 1892, Թ. 102, 103: — Բնութիւն մը Ս. Մալխասեանցէ, Մոսկու, 1892, էջ 758—769:

<sup>2</sup> Նոր-Նախիջեանի տպարանը բացուած է 1789ին՝ Սալաթեան Գրիգորի տպարանին փոխադրութեամբ Պետերբուրգէն (հմմտ. Ա. Էս, Յովսէփ Կաթողիկոս Ար- զութեան, Թիֆլիս 1902, էջ 66). հետեւաբար 1787ին չէր կրնար Ի Նախիջեան Եղիշէ մը տպագրուիլ:

Կիւլէսէրեան կը նշանակէ իւր ցուցակին մէջ (էջ 575).

ա. Կ. Պոլիս 1860:

բ. Փարիզ 1861 «տպ. Արամեան (Ա. տպագր. Արամեանի)»: Իմա՝ 1866, Կ. Պոլիս: Ղազիկեան կը յիշէ հարցականով՝

Կ. Պոլիս 1870. մեծագիր?: Իմա՝ 1871, Ա. տպ. Գաթապեանի:

Եղիշէի Պատմութեան ըննական հրատա- րակութիւն մը համեմատութեամբ ձեռա- գիրներու չէ կատարուած մինչեւ այսօր: Գարեգին Սարկաւազ (այժմ Արքեպիսկոպոս) Յովսէփեան ձեռնարկած էր պատրաստել էջ- միածնի ձեռագիրներու Համեմատութիւն մը, որուն առաջին թերթերը սկսած ալ էին տպագրուիլ անցեալ դարու վերջերը. բայց դործը լոյս չտեսաւ ամբողջութեամբ: Կը յիշեմ այս սեղ Եղիշէի բնագրին հայոյ մանր գրուածքներն ալ, ամբողջական ընծայելու համար մատենագիտական տեղեկութիւն- ներս:

Արդէն հին Ժամանակներ պատճառած են դժուարութիւններ Եղիշէի Պատմութեան մէջ երկնցոյ պարսկերէն բառերը: Ոմն անձանօթ 1350էն յառաջ՝ հարցուփորձած է այս մասին «պարթեւ» մը, եւ խնդրած անոնց լուծումը: Բազմաթիւ ձեռագիրներ (յատկապէս Բառա- գրքեր) հասցուցած են մեզի այս լուծումնք- ները, որոնք խորագիր կը կրեն.

«Թարգմանութիւն պարսիկ բառի(ց) Ի վարդան գրոց». նաեւ «Լուծումն տարակոյս բանից որ կայ Ի Պատմութիւնն վարդանայ»: Սկ. «Ձրադաշտական. զրուն բան. կամ՝ զկարեւոր ուխտ: Վզրուհ. մեծ»: ... վ. «Սեպուհ. կարեւոր, կամ՝ մեծարգոյ: — Ձառաջին ձառն ընթերցեալ գտի երիս բառս, զոր Պարթեւն ոչ գիտաց ասելով թէ չէ պար- սիկ. եւ այլն այս է բովանդակ»:

Ձեռածիրներ. Երեւան, Պետ. Թանգա- րան, Թ. 701, 26 ա (1675). 817, 47 ա (1632), 820, 54 ա (Ժէ), 866, 73 ա: Էլմիածին, Պետ. Ձեռագրատուն, Թ. 266, 73 ա (1468). 267, 199 ա (1613). 450, 121 ա (1692). 532, 96 ա (1598). 534, 173 ա (Ժէ). 536, 109 բ (Ժէ). 537, 200 բ (1673). 538, 99 ա (ԺՁ). 540, 203 ա (ԺԸ). 573, 469 բ (ԺԵ). 1654, 236 ա (ԺԵ). 2370, 223 ա (1624). 2371, 285 ա (1357). 2372, 357 ա (ԺՁ). Բէլիշեան՝ Յու- ցակ հայերէն Ձեռագրաց Չմատու, Թ. 276, 289 ա (1350). 334, 151 ա (ԺԴ): Եւ այլն:

Քանի մը պարսկերէն բառեր, որ դոր- ծածուած են Ի Պատմութեան Եղիշէի. Բազմապէս, 1895, էջ 5—7, 49—52, 145—148:

Հմմտ. նաեւ՝ Յ. Թիրեաքեան, Եղիշէ (Ի Պատմութեան մէջ սրբագրութիւններ): Արարատ, 1903, էջ 635—642, 724—736:

Նոյն՝ Քրդիկար բառի ստուգաբանու- թիւն. Բազմապէս, 1907, էջ 22—24:

Հ. Գ. Նահապետեան, Ուղղագրութիւնք Եղիշէի. Բազմապէս, 1907, էջ 211—265 = Ուղղագրութիւնք ազգային մատենա- գրաց, Վենետիկ 1907, էջ 123—141:

Նոյն՝ Սրբագրութիւններ Եղիշէի վար- դանայ եւ Հայոց պատերազմին. Բազմա- պէս, 1931, էջ 73—74:

Տես նաեւ Հորոյ՝ Եղիշէ եւ իւր Ի. դա- րու հայ ուսումնասիրողք. Կ. Պոլիս 1923. զոր յիշեցինք վերագոյն:

12. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. The history of Vartan, and of the battle of the Armenians: containing an account of the religious wars between the Persians and Armenians; by Elisaeus, bishop of the Amadunians. Translated from the Armenian by C. F. Neumann. London 1830, 4<sup>0</sup>, pp. XXIV + 111. Նոյնը մաս առ մաս հրատարակուած նաեւ Ի թերթին The New Armenia 1927. — Նոյնանի այս թարգմանու- թիւնը մասնական է, կրճատած է կրճուական բովանդակութեամբ ձառերն եւ նման տեղիք- ները:

2. Soulèvement national de l'Arménie chrétienne au Ve siècle contre la loi de Zoro- astre, sous le commandement du prince Var- tan le Mamigonien. Ouvrage écrit par Elisée Vartabed contemporain, sur la demande de David le Mamigonien, son collègue. Traduit en français par M. l'abbé Grégoire Kabaragy Garabed. Paris, 1844, 8<sup>0</sup>, pp. XIX + 358 եւ մէկ քարտէս.

3. Elisée Vartabed. Histoire de Vartan et de la guerre des Arméniens. Traduction nouvelle accompagnée de notes historiques et critiques par V. Langlois. Հրատարակուած Ի հաւաքման՝ Collection des historiens anciens et modernes de l'Arménie. T. II (Paris 1869), p. 177—251.

4. Le martyre de Vartane et de ses com-

<sup>1</sup> Այս առթիւ քննադատութիւններ՝ E. Teza, La storia dei Vardanjani di Elisaeo nella nuova edizione di Mosca. Roma 1893, 8<sup>0</sup>, pp. 14 (= Rendiconti della R. Accad. dei Lincei, II, 6, p. 397—408)



«Վասակագիրք» մը քան Վարդանագիրք, Յիշատակարան վասն Վասակայ քան վասն Վարդանայ. իր վերջարանին խօսքերն են. «Գրեցաւ Յիշատակարանս այս վասն նորա (Վասակայ Սիւնոյ), առ ի կշտամբունն յանդիմանութեան մեղաց նորա, զի ամենայն որ զայս լուեալ զիտասցէ, նզովս ի հետ արկցէ մի՛ լիցի ցանկացող գործոց նորա» (Է. Յեզ., էջ 109): Ստուգիւ ալ ամբողջ եօթը յեղանակներու մէջ աւելի Վասակի չարագործութիւններու քան Վարդանի անձին եւ արիական գործերու շուրջը կը յաճի խօսքը:

14. ԸՆԾԱՅԱԿԱՆԸ

Թովմաս Արծրունւոյ վկայութեան համաձայն Եղիշէ «հրամանաւ սրբոյն Վարդանայ» կը գրէր իւր Պատմութիւնը:

Արդեամբք ալ այսպիսի մեծ անձնաւորութիւն մ'ունի Եղիշէ յանձին իւր Մեկենասին, որուն կը ձօնէր Ընծայականը:

Ընծայականը՝ զեռեղուած գրքին սկիզբը, գրուած է աշխատութեան, այս ինքն Ա.—է յեղանակներու աւարտելէն ետքը (համա. «արարի»):

Խնդրոյն է Վարդան Մամիկոնեան, 572ի «Հայոց պատերազմի» սպարապետը. անոր են ուղղուած խօսքերս. «Զբանն, վասն որոյ պատուիրեցեր, ով Բաջ, արարի վասն Հայոց պատերազմին, զոր հրամայեցեր<sup>1</sup>»: «Բաջ» կ'անուանէ իւր Մեկենասը, ինչպէս որակած էր նաեւ յնթացա Պատմութեան («Բաջն Վարդան», 91. «Արին Վարդան» 90, «Կորովին Վարդան», 92 եւն): Կ'անուանէ նաեւ «Մեծ ի զիտութեան Աստուծոյ», այս ինքն տեղեկագոյն մը հրամայուած խնդրոյն՝ Հայոց պատերազմի հանգամանքներուն. այս միտքը աւելի ուժեղ շեշտուած է յաջորդ նախագատութեան մէջ. «Առ ի՞նչ արդեօք հրամայեցես, քան թէ հրամայիցիս լաւագոնացն». այս ինքն. «Ինչո՞ւ ինձ կը հրամայիս ճառագրել նիւթի մը մասին, որուն ամէնէն աւելի դուն ես հմտագոյն, իբրեւ աղանատես, մասնակից եւ հրամանատար, ուստի եւ Բեզ պատշաճագոյն էր առաւելագոյն (Բեզ պէտք

էր հրամայել) զրի առնել հեղինակել լաւագոյն քան զոր ես գրեցի»: Այս միտքը կ'արտայայտէ նաեւ հետեւեալ պարբերութիւնը, ուր Եղիշէ խնդրողին հայցուածքը կ'որակէ. «Երկնաւոր սիրոյ է նշանակս այս եւ ոչ երկրաւոր փառասիրութեան» ցոյց: Ոչ թէ փառասիրական նպատակ մը կը հետապնդէր Սպարապետը երբ հրաման կու տար Մատենագրին ճառագրել Հայոց պատերազմի անցքերը, եւ կամ որովհետեւ ինքն էր պատերազմին ձեռնարկուն եւ ոգին՝ սնտաութեամբ իւր քաջութիւններու յիշատակն անմահացնել կը զիտէր, այլ միայն այն, որ հոգեշունչ հեղինակին խօսքերով — ճառագրութեամբ — հայթհայթուի «միտքարութիւն սիրելեաց<sup>2</sup> եւ յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց»: Եատեն էին լքած հայրենիքը եւ օտար երկնքի տակ կը սպասէին դարնանադուշակ ծիծեռնակներուն՝ լսելու հայրենիք վերագառնալու աւետիքը. շատերն էին որբացած, այրիացած. ամէնն ալ կարօտ էին լուրերու «ի հեռաստանէ», միտքարութեան, քաջալերութեան, յոյսի: Վերջարանին տպաւորութեան տակ է հոս մատենագիրը, Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց հառաչանքներու ճշման տակ:

Սպարապետին այն բարի նպատակը, անփառունակ խնդիրը կը ներշնչէ քաջալերութիւն հեղինակին՝ մոռնալով անձին տկարութիւնը ձեռնարկելու խնդրուած ճառագրութեան, հնչեցնելու իր սիրտին ըրբարուր: Ինքնին կը խոստովանի զայս Եղիշէ, երբ ուղղելով իւր խօսքը Մեկենասին, ճառագրեցի կ'ըսէ «զի հանապաղ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն եւ զյետակացելոցն զվատթարութիւն, ոչ յանձին կարօտութիւն երկրաւոր առատ զիտութեան լրման<sup>3</sup>, այլ այցելութիւն երկնաւոր անտեսութեանն՝ որ մատակարարէ յառաջգիտութեամբ զհատուցումն երկոցունց կողմանցն», ուստի ոչ թէ որպէս զի Սպարապետը նոր բան մը

<sup>2</sup> «Սիրելիք» հոս Հայոց փափկասուն տիկնայքը եւ անոնց ամուսինները կ'ակնարկէ. տե՛ս այս հատուածը Բ. յեղանակին վերջը:

<sup>3</sup> Բնագիրն ազաւազուած կ'երեւայ հոս. Վիեննայի Թ. 971 ունի. «ոչ յանձին կատարութիւն զոտագիտութեան գալ լրման»: — Հեղինակը նաեւ վերագոյն գովեց Մեկենասին զիտութիւնը. «ով մեծ ի զիտութեան Աստուծոյ». նկատի առնելու է առ այս եւ զրուստական խօսքերս. «զի եւ ինքն իսկ (Վարդան) տեղեկ էր ի մանկութենէ իւրմէ սուրբ Կոստանայ. զոր եւ ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն Մակարայեցւոյն ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն» (81):

<sup>1</sup> Գործք Առաքելոցի (Ա. 1) նմանութեամբ է սկզբնաւորութիւնս. համա. «Զբանն ստաջին, զոր արարի վասն ամենայնի, ո՛ր Թէոփիլէ»: Տպագիրներն ունին «Բանն», Վիեննայի, Թ. 971, որուն համեմատ է յառաջընթացութեան, զ զրին համար գատարի տեղ է թողուցած, զարգացրով գրելու համար:

սորվի իր անչափ զիտցածներուն վրայ, այլ հասու ըլլայ թէ ինչպէս աստուածային նախախնամութիւնը երկու կողմերուն ալ՝ առաքինիներուն եւ վատթարներուն՝ կը բաշխէ արդար հատուցում, ինչպէս ներկայ, նոյնպէս հանդերձեալ կեանքին մէջ: Հոգեխօսական արտայայտութիւններ, որոնք կը համապատասխանեն ժամանակին եւ պարագաներուն:

Խնդրողին հրամանն է գրել «վասն Հայոց պատերազմին», «յորում բազումք առաքինացան քան զսակաւս»: Պատերազմը պատճառած է «բազում հարուածս» եւ «թշուառութիւն» հայ ազգին: Պատերազմը «Արեւելից Իշխանին» դէմ է մղուած. երկարած են «իւրքն խոսովութեան»:

Կանխեցինք ըսել, թէ ակնարկուած «Հայոց պատերազմը» 572ի հայկական մեծ ապստամբութիւնն է. որ բերաւ իրեն հետ Պարսիկ-Հոռովմէական քսանամեայ պատերազմը: Հին ըմբռնումը, որ «Հայոց պատերազմի» մէջ 451ի անցքերը կը տեսնէր, Պատմութեան Ընծայականը չ'արգարացներ:

Հեղինակը այս բոլոր անցքերուն նկարագրութիւնը իբրեւ աղանատես կը խոստանայ տալ Ա.—է յեղանակներու մէջ: Եւ մերձեցած է աշխատութեան սկիզբը, որովհետեւ «Հայոց պատերազմի» աղէտները պիտի պահանջէին իրմէ արտասուքներ. դէպքեր, որոնց եղած էր ինքն ալ աղանատես, պիտի վերլուծուէին. «Արդ... սկսցուք ուստի արժան է սկսանել, թէպէտ եւ ոչ յօժարեմք զթշուառութիւն մերոյ ազգիս ողբայ»:

Ըստածներու համաձայն Պատմագիրը<sup>4</sup> կամ ճառագրը<sup>5</sup> գլուխ հանած է՝ ա. նկարագրութիւնն այն դէպքերուն, որուն եղած է ինքը աղանատես:

բ. Պատմած է ի շինութիւն յողմերուն եւ ի քաջալերութիւն սրտաբեկներուն:

գ. Եւ այս ամէնը այնպիսի ոճով, որ ողբերէ ունկնդիրները, զբաւէ անոնց ուշադրութիւնը, առնէ վերաբերէ՝ ճախրելով Մեկենասին հետ («ընդ քեզ») «եւ իբրեւ բարձրաթուիչս եղեալ՝ զամենայն փնտասկար մրրկածին օղովքս անցուցանիցեմք (մոռցնել տալով բոլոր հարուածներու եւ տառապանքներու յիշատակը). եւ փոքր ի շատէ ծծելով

<sup>4</sup> «Մինչեւ ցայս վայր ոչինչ կարի զանկխէի պատմել զհարուածս ազգիս մերոյ» (էջ 69):

<sup>5</sup> «Ահա... ճառագրեմք զբազում հարուածս» (էջ 6):

յանապական վերին օդոցն (երկնաւոր միտքարութեամբ)՝ առնուցումք զգիտութիւն ի փրկութիւն անձանց եւ ի փառս ամենայազթ եկեղեցւոյ» (էջ 6):

Ընծայականը մնացած է անվթար: Խմբագրիչը հարկ չէ տեսած փոփոխելու զայն, որովհետեւ նկատած է ամբողջն այլաբանական: Անուշադիր եղած է յատկապէս իւր չափախառնութիւններու համաձայն ուղղելու Ա.—է յեղանակներու խոստարանութիւնները:

Կ'աւարտի Ընծայականը «ուր ընդ նմին Ս. Երրորդութիւն ցնծացեալ բերկրիցի յանարամական յիւրում էութեանն» խօսքերով: Յաջորդ՝ «Արդ որովհետեւ ընկալաք զհրամանս պատուիրանի»... տողերը կը վերաբերին հաւանորէն նախնական Ա., այժմեան Բ. Յեղանակի սկզբնաւորութեան (էջ 14, 5. «տեսի եւ լուայ: Արդ...») Խ. Վ. Գալֆայեան իւր «Ըստ Անձեւացեացն օրինակի» կատարած հրատարակութեան մէջ տողերս դասաւորած է Ա. Յեղանակին սկիզբը, որ ուղիւ չէ:

15. Ա.—է. ՅԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ ԵՈՍՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եղիշէ գրած է «Հայոց պատերազմի» Պատմութիւնը համաձայն Ընծայականին՝ եօթը գլուխներով կամ զրուագներով, զորոնք կ'անուանէ ինքը «Յեղանակ». «Ահա նշանագրեցի յայսմ եօթն յեղանակիս»:

Յեղանակներու բաժանումն եւ խոստարանութիւններն այսպէս կը նշանակէ.

- «Ա. զժամանակն<sup>1</sup>:
- Բ. զիւրացն պատահումն յիշխանէն Արեւելից<sup>2</sup>:
- Գ. զՄիաբանութիւն ուխտին Եկեղեցւոյ<sup>3</sup>:
- Դ. զԵրկպառակութիւն ոմանց բաժանելոց<sup>4</sup> ի նմին ուխտէ:
- Ե. զՅարձակումն Արեւելեայց<sup>5</sup>:
- Զ. զԸնդդիմանալն Հայոց պատերազմաւ<sup>6</sup>:
- Է. զՅերկարումն իրացն խոսովութեան<sup>7</sup>»:

— «Յայսմ յեօթն գլուխ կարգադրեալ<sup>8</sup> եւ 1764:

<sup>1</sup> զժամանակն 1828: — Թիւրք տպագրութեան տարիներն են: W = Վիեննայի Թ. 971 ձեռագիրը:

<sup>2</sup> Արեւելեայց 1764:

<sup>3</sup> Ուխտի. W. 1823. չունի 1764: Եկեղեցւոյն 1764:

<sup>4</sup> Ոմանց բաժանելոց չունի 1764: Ուխտն 1764:

<sup>5</sup> Արեւելից 1764, 1823. յարեւելից W.

<sup>6</sup> զՀայոց պատերազմէն 1764:

<sup>7</sup> զԵրկարումն 1764, 1823. իրաց 1764:

<sup>8</sup> Կարգադրեալ 1764, 1828:

եղեալ ծայրալիւր պատումամբ<sup>9</sup> զսկիզբն եւ զմիջոց եւ զկատարումն<sup>10</sup> :

Բարեբախտութիւն է, որ հեղինակը նախահոգ եղած է տալ այսպէս իւր Պատմութեան ուրուագիծը : Բարեբախտութիւն է նաեւ որ խմբագրիչը, թէպէտ վեր ի վայր փլուզած է բնագիրը, բայց գոնէ Ընծայականին չէ եղած ձեռնամուկը : Ներկայիս մեր ձեռքը գտնուած Պատմութեան մէջ Յեղանակներու այս յաջորդութիւնն եւ խոստարանութիւնները կրած են մեծամեծ փոփոխութիւններ :

Յեղանակներու յաջորդութիւնն եւ խոստարանութիւններն այսպէս կը ներկայացնեն ձեռագիրները իւրաքանչիւր յեղանակի սկիզբը .

Ա. Ժամանակ<sup>11</sup> :  
Բ. Իրացն<sup>12</sup> պատահումն յիշխանէն Արեւելից :

Գ. Վասն Միաբանութեան ուխտի<sup>13</sup> սուրբ Եկեղեցոյ :

Դ. Վասն Երկպառակութեան<sup>14</sup> իշխանին Սիւնեաց եւ<sup>15</sup> Ընկերաց իւրոց<sup>16</sup> :

Զ. Կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից<sup>17</sup> :

Է. Կարգադրի<sup>18</sup> դարձեալ առաքինութիւն Հայոց եւ չարագոյն եւս երեւի անօրէնութիւնն Վասակայ<sup>19</sup> :

Արտաքոյ եօթն յեղանակի Ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմի եւ չարչարանաց սուրբ քահանայիցն :

Կոստանեանց<sup>20</sup> քննելով էջմիածնի ձեռագիրները, կը նկատէ, թէ անոնցմէ հինգը (մեր ցուցակին Բ, Գ, Է, Ը եւ Թ ձեռագիրները) չունին Ե Յեղանակը : Զունին նաեւ Արմաշի եւ Վիեննայի օրինակները, ինչպէս նաեւ 1764, 1823ի եւ 1828ի տպագրիչներու գործածած օրինակները : Էջմիածնի

Թ. 2559 եւ 573, եւ Ամիրտու ձեռագիրը (1130էն) յիշեալ ձեռագիրներու Զ. յեղանակը կը խորագրեն «Հինդերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից» եւ առանց որ եւ իցէ զիտողութեան կ'անցնին Է.ին : Կիւլէսէրեան կը զիտէ, թէ Ամիրտու օրինակը՝ այն տեղ ուր տպագրիչներու Զ. յեղանակը կը սկսի «մեր ձեռագրին մէջ պարզ նշան մ'ունի լուսանցքի վրայ<sup>21</sup>» :

Այս ոստումը Դ.էն Զ.ին նկատած են գրչագիրները . Կ. 1625 (1641էն) Դ. յեղանակին վերջաւորութեան լուսանցքի վրայ գրած է ծանօթութիւնս . «Եւ յայսմ տեղուջ զընթերցողն մի ցնորի վասն հինդերորդ յեղանակին, զի օրինակն ոչ կայր, եւ մեզ այլ եղեւ ոչ պակաս ցնորումն» : Իսկ Թ. 2639 Դ. եւ Զ. յեղանակներուն մէջ տեղ երկու եւ կէս դատարկ թերթ թողուցած է, յուսով թէ պակասն հնարաւոր կ'ըլլայ ապա լրացնել այլուստ : Ուրիշ ձեռագիր մը՝ Կ. 1643 (1207էն) ունի Ա.—Դ., Ե (= Զ), Զ (= Է) . եւ «Արտաքոյ վեց յեղանակէն եւթներորդ դարձեալ վասն նորին պատերազմի եւ չարչարանաց սուրբ քահանայիցն» (= Ը յեղանակ) :

Կ. Պոլսոյ 1764ի տպագրիչը համաձայնեցնելու համար յեղանակներու թիւն եւ յաջորդութիւնը Ընծայականին մէջ նախատեսուած բաժանումներուն՝ Զ յեղանակը բաժնած է երկուքի եւ անուանած է «Ե. Յարձակումն յԱրեւելից» եւ «Զ. Կրկին անգամ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից» : — Յետ այսորիկ իրրեւ ետես...» :

Վերջարանին մէջ (էջ 213) կը գրէ հրատարակիչն (Տիրացու Մելքիսեօղ) . «Այլ արդ՝ յայտ լիցի եւ այս, զի հեղինակ սուրբ զրոյս՝ յսկզբան անդ թէպէտ խոստացեալ էր խօսիլ յեօթն եղանակս, եւ այլ ինչ յաւել ի նոսա, սակայն առ ի վանումն ոմանց տաղակացմանց եւ ի նկրտումն որպէս ախորժմանց՝ զերկարադոյնսն ի նոցանէ ըստ զանազանիցն պարբերութեանց խորագրելով սուղ հատուածս ցուցի<sup>22</sup> : Յորս զթիւ չարկեալ եւ զպատմելն եզի զիմաւն երրորդաւ . զի մի ընդ ոսկի բանս սրբոյն՝ յապիկարէս կապարեայ ինչ խառնեալ ձեզ ցուցցի : Նաեւ զայսու

<sup>21</sup> Կիւլէսէրեան, Եղիշէ, էջ Ի—ԻԱ :  
<sup>22</sup> Կ'անհարկէ այլ եւ այլ հատուածներու խորագիրները, զորոնք զեանգած է նորագիր :

<sup>9</sup> Պարսպամբ 1764, 1828 : Պատարմամբ W :  
<sup>10</sup> զՄիջոցն եւ զկատարածն 1764, 1828 :  
<sup>11</sup> Զունի W. Ժամանակն 1828 :  
<sup>12</sup> Գիրացն W. 1764, 1823 :  
<sup>13</sup> Ուխտի չուցի Ամիրտու : Սուրբ Ուխտին Եկ. 1764, 1828, 1861 : Սուրբ Եկեղեցեացն Ամիրտու :  
<sup>14</sup> Երկպառակութեան 1828 :  
<sup>15</sup> Եւ անօրէն 1828 :  
<sup>16</sup> Նորա 1764, 1823 :  
<sup>17</sup> Պարսից չունի Ամիրտու : «Պատերազմն Հայոց» 1861 :  
<sup>18</sup> Յորում նկարագրի 1828 . յորում կարգադրել . Ամիրտու : Առաքինութիւնն Ամիրտու . 1823, 1828 :  
<sup>19</sup> Վ. չարին 1764 : — Յերկարումն իրացն խոսութեան. 1861 :  
<sup>20</sup> Կ. Կոստանեանց, Եղիշէի Պատմութեան բնագիրը . Լուսնայ, 1902, Ա, էջ 183—193 :

մի՛ զանց եղիցի, թէ խորագիր հեղինակին հիմնգործող գլխոյն չէր յօրինակին : Եւ մեր չեղեալ ձեռնահաս սուրբ զրոյս կրկին օրինակաց՝ ունելով զիսիդճ մտաց՝ ոչ սակաւ տարժանեալ եղէ, թէ գուցէ զլուխն այն՝ պակասեալ իցէ . թէ եւ ըստ իմն իմացման խորագիրն այն ինչ սոսկ հատեալ՝ գէթ վեցերորդինն է անգր մուծեալ . ուստի ըստ իմացման սրբոյն եղեւ կարգադրեալ :

Այսպէս ալ պահպանուած է բաժանումս 1774ի Պետերբուրգի, 1823ի Կ. Պոլսոյ, 1828ի Վենետիկի եւ վերջապէս 1861ի Գալֆայեանի եւ ասոնցմէ ըլլալով հրատարակութիւններու մէջ :

Այս ընթացքը ցոյց կու տայ թէ վերոյիշեալ հրատարակիչները Եղիշէի օրինակը բովանդակութեամբ անթերի գտած են . կը գրէ նաեւ Կոստանեանց . «Բնագրի մէջ այնպիսի պակաս տեղ չկայ, որ պատմական բովանդակութեանը մնաս պատճառէ» : Բայց եւ այնպէս կը խոստովանի թէ ձեռագիրներու համաձայն «մի յեղանակ պակաս է, թէեւ մեզ ծանօթ բնագիրն անթերի կայ»<sup>23</sup> :

Տէր-Պողոսեան, որ այս կէտը Երկրորդ անգամ քննութեան առաւ, յանգեցաւ այն եզրակացութեան «որ Յառաջարանի մէջ յիշուած եօթն վերնագիրների յաջորդական կապը ըստ իմաստի պահպանուած է Պատմութեան ընթացքում յեղանակների հետեւողական կարգով<sup>24</sup>» : Այս եզրակացութեան եկած է այն նկատումով, որ Եղիշէ որ եւ է հանգամանքէ զրոգուած ուղած է շեշտած ըլլալ — բառացի կրկնութիւններով կամ ամփոփումներով — նախորդ եւ յաջորդ յեղանակներու ներքին կապը . եւ այդ մասերու մէջ Եղիշէի Պատմութիւնը անխախտ է, որովհետեւ «այն շարկապիչ հատուածները պահպանուած են իրենց տեղերում»<sup>25</sup> :

Ուղիղ է Տէր Պողոսեանի նկատողութիւնը եւ այժմեան խմբագրութեան մէջ կարելի է տեսնել յեղանակներու արտաքին կա-

<sup>23</sup> Կոստանեանց, Լուսնայ, էջ 192 : «Այսպէս ուրեմն Եղիշէի պատմութեան բնագրից ամբողջապէս պակաս է Ե. յեղանակը, որի խորագիրն է «Յարձակումն արեւելեաց» : Թէ ի՞նչ է եղել այդ յեղանակի բովանդակութեան մանրամասնութիւնը, որքան ընդարձակ է եղել այն, եւ ի՞նչ հանուել բնագրից, այդ հարցերին բաւարար պատասխան տալ ըստ կանոնի է : Հարկ է նախ համախմբել նոցա վերաբերեալ տեղեկութիւններն եւ սպասել զուցէ ժամանակն օգնէ նոցա առաջնորդութեամբ նորանոր նիւթեր հրատարակ հանել խնդրի լուծման համար» :  
<sup>24</sup> Հ. անգ. Ա. մ. ս., 1902, էջ 205 :  
<sup>25</sup> Անգ. էջ 203—205 :

պակցութիւն իրարու հետ . այս ինքն անոնք կը յաջորդեն իրարու նաեւ ըստ իմաստին : Բայց այսու Ընծայականին խոստարանութիւններն եւ Ա.—Ը յեղանակներու բովանդակութիւնը չեն գոցեր զիրար . կան ներքին հակասութիւններ, որոնք կը կարօտին լուծման :

Որովհետեւ պատմագիրն իւր Ընծայականը շարագրած է Պատմութեան աւարտելէն ետքը, չենք կրնար մտածել թէ անիկա ուրիշ խոստարանութիւններ նշանագրած ըլլայ հոն, քան որ կիրարկած էր բնագրին մէջ իւրաքանչիւր յեղանակին սկիզբը : Հարկ է ըսել հետեւաբար, թէ այժմեան օրինակներու մէջ նկատուած շեղումները օտար են սկզբնագրին :

16. ՍԿՁԲՆԱԳԻՐՆ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Եղիշէի Պատմութեան ոչ միայն խոստարանութիւններն ենթարկուած են փոփոխութեան, այլ եւ ամբողջ բնագիրը վերիվայր յեղաշրջուած է . ասով նաեւ բովանդակութիւնը տուժած է իւր հարազատութիւնը, մանաւանդ թէ առած է անճանաչելի կերպարանք : Այլապէս ալ չէր կրնար ըլլալ : Կործանուած է Եղիշէի եօթնյարկեան, զեղեցկարուեստ, հոյակապ յուշակերտը, աւոր ատաղձով, ուրիշ հողի վրայ, ուրոյն յատակազոյլ բարձրացուած է նոր մը, ոչ բարձրութեամբն հաւասար անոր, ոչ արուեստովը մրցակից անոր եւ ոչ զարձեալ միասնականութեամբ քան զայն հրապուրիչ :

Աշխարհիկ մը, որ նայի այս նոր շինուածքին, գոնէ թերեւս անոր վրայ կէտեր, ձգիչ գեղարուեստական քանդակազարդերով, եւ յակճիոս կանգնած հիանայ ամբողջին վրայ . բայց եւս պիտի նմանցնեմ այդ կերտուածքը արեւելեան ա՛յն կառուցուածքներուն, որոնք բարձրացած են հին դարերու քանդակազարդ եկեղեցիներու կամ ապարանքներու ատաղձներով : Կը խլեն, այո՛, հիացմունք ծագկահիւս, խոյակալարդ քանդակները, բայց անոնք մուրացածոյ առնուած եւ ազուցուած են հոն, կ'ենթադրեն ուրիշ ճաշակներ եւ ուրիշ նկարիչներ, քան կը հայթհայթէր դարը, որ ծնունդ տուած է անոր : Գեղեցկատեսիլ են քանդակազարդերը, առանձին առանձին առնուած, բայց անոնց անյարիր առնթերագրութիւնը խրտուցիչ է ճաշակընտիր քիմքին . որովհետեւ կ'երեցնէ

աններդաշնակութիւն, կը պակսի հոն իմաստ եւ միասնականութիւն:

Հարկ է ընտրել հինը նորէն. զնահատել բեկորները ըստ արուեստին: Այսպէս միայն արժէք պիտի ստանան բեկորները. պիտի շարժեն հիացմունք իբրեւ հատակոտորներ անհետացած հոյակապ յուշակերտին:

Դեռ վաղաժամ է անուանել խմբագրիչն յանուանէ եւ ճշգրիտ անոր ժամանակն եւ միջավայրը: Բայց կանգնած է անոր դժխեմ անձը իմ առաջ, որ բահն եւ բրիչը ձեռքին հիմն ի վեր կը բրէ, կը քանդէ հոյակապ յուշակերտն Եղիշէի: Անհեղեղ է ո՛չ գործողութիւնն միայն, այլ առհասարակ մտածմունքը: Կը քանդէ յուշակերտ մը, մոռցնել տարու համար դարերուն զարաշրջան մը իւր հերոսներով. սրբելու համար անոր վրայէն յիշատակը այն կորովներուն, որոնք Մամիկոնեան հրամանատարութեան տակ արիացան, հայրենի ազատութեան համար նահատակուեցան:

Ի՞նչ էր շարժառիթն այս վայրագութեան. ի՞նչ էր պատճառը այս սեւ վրէժխնդրութեան:

Ատելութիւնը հանդէպ Հոռոմներու: Ուր կը փառաբանուէր հայ-հռոմէական ուխտագրութիւնը, միաբանութիւնն սուրբ ուխտին՝ կուսելու հայ հողին վրայ, քրիստոնէութեան անուան եւ Կայսեր փառքին համար. ուր կը ներբողուէին իբրեւ նահատակներ ռազմադաշտերու վրայ ինկողները, կուսելու հետեւանքով հռոմէական հող փախստեայ եկեղեցականները, նախարարներն եւ տիկնայքը, հոն չարակնած է խմբագրիչը, յուզուած է իր մաղձը: Չէ հանդուրժած տեսնել կամ լսել նման սերտ «միաբանութիւն» մը, կնքուած հայ ժողովրդեան եւ «անարի»<sup>1</sup> հոռոմներու միջեւ: Դաւանաբանական-քաղաքական հողի վրայ գործուած է այս աւերը: Այս մասին ընդարձակ յետոյ:

Այսպէս Եղիշէի պատմութեան այժմեան խմբագրութիւնը յորինուած է սկզբնաղբիւր Եղիշէի տարրներով եւ անոր արցունքներով զանգուած շաղախը: Եթէ սկզբնաղբիւր 572ի «Հայոց պատերազմը» նիւթ ունէր իր շի-

<sup>1</sup> Խմբագրիչը յիշելով Հայոց պատմաւորութիւնն առ թէպէտ, խնդրելու համար Հոռոմայեցեաց օգնութիւնը, կը գրէ թէ անոր յաջորդն Մարկիանոս մերժեց Հայոց խնդիրը. «Իսկ անարիս այս լաւ համարէր պահել զուստն Հեթանոսաց փասն մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան» (էջ 56):

նուածքին, խմբագրիչը նիւթ ընտրած է իրեն 451ի Հայոց պատմութիւնը: Ուրուազիծը մատակարարած է իրեն Ղազար իւր Պատմութեան Բ. Դրուագին մէջ. առաջ՝ ծառայած է Եղիշէի Պատմութիւնն եօթը յեղանակներու մէջ: Եղիշէի Պատմութիւնը ձեւաւորուած է Ղազարի կաղապարին վրայ. աւելորդ մասերը յաղաւուած են. պակասները լրացուած՝ հետեւելով Ղազարի. գէպքերու նկարագրութիւնները յարմարցուած են Ղազարի տեղեկութիւններուն, անունները փոփոխուած են՝ փոխառութեամբ Ղազարէն: Ամբողջութիւնն այժմ երկու պատմագրութիւններու դանդուածն է, բովանդակութիւնը 451ի ապստամբութեան յարակից գէպքերն են. իսկ նկարագրութիւնները 572ի Հայոց պատերազմի պատմութեան դրուագները: Եղիշէի անունը կը կրէ Պատմութիւնը, Եղիշէի ձայնը կը լսուի հոն. բայց Եղիշէն չէ մատենագիրը: Խմբագրիչը կը խօսի հոն:

Չեմ գտներ բառ որակելու Եղիշէի մատենին այժմեան խմբագրութիւնը. վերագոյն անուանած էի զայն թո՛հ եւ բո՛հ մը. կը մնամ նոյնին վրայ:

Խմբագրիչը թէեւ Վարդանանց պատմութիւնն է ուղած երեւան բերել այս քառուկն, բայց ինչպէս նկատեցինք վերագոյն (§ 7) յիշականին անօրէն Վասակի Յիշատակարանն է տուած: Վարդանի նկարագրիչը, անոր նախաւոր կեանքը, արիական գործերը՝ չեն պատկերացուած հոն. աւելի ճիշտ Վասակի անձն եւ անօրէն գործերն են նկատի առնուած: Իբրեւ չարաղեւ մը ամբողջ պատմութեան մէջ ցցուած է Վասակի անձը: Գործին նպատակը գեղեցիկ ներկայացուած է Ի. Յեղանակին վերջը, ուր կը գրէ խմբագրիչը. «Գրեցաւ յիշատակարանս<sup>2</sup> այս փասն»

<sup>2</sup> «Յիշատակարան» բառին այս առումը արժանի է ուշադրութեան: Ինչպէս Ե.—2. դարերու մատենագիրները, նոյնպէս սկզբնաղբիւր Եղիշէ «Յիշատակարան»ով կը հասկնան յիշատակ. համեմատէ հետեւեալ կոչումները.

1. «Չոն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն յայտնութեանն Բրիտտոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» (62): 2. «Եւ ըստ պատերազմական կարգին դբաջ արանց գլխաւորակարանս հանապաղ երկրորդէր (Վարդան) առաջի նոցա» (81): 3. «Որոյ (Աղան Արծրունւոյ) յիշատակարանն ընդ անուան վկայցին սրբոց պատմեալ քարոզի» (Ղ. Փարպեցի, 5): 4. «Գիրք յիշատակարանաց» (Ա. Եղբ, Բ. 22). «Գիրք յիշատակարանի» (Բ. Եղբ, 2. 21). «Մատենն յիշատակարանաց» (Ա. Եղբ, Բ. 26): Այլուր կ'ըսուի նոյն իմաստով «Գիրք յիշատակաց» կամ նաեւ պարզապէս «Յիշատակք». այսպէս. «Գրեալ է ի գիրս յիշատակաց Պարսից» (Եսթեր, Ժ. 2). «Գիրք յիշատակաց»

նորա (Վասակայ) առ ի կշտամբունն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն որ զայս լուեալ զիտասցէ, նոզլս ի հետ արկցէ, եւ մի լիցի ցանկացող գործոց նորա» (էջ 109):

Սկզբնաղբիւրը եօթը յեղանակներով կամ զլուսններով բովանդակած է 540—595 տարիներու պատմական իրադարձութիւնները, յատկապէս Խոսրով Ա. Անուշըռուանի կրօնական-քաղաքականութեան պատմութիւնը, ճառագրական ոճով: Իւրաքանչիւր յեղանակ ունեցած է իւր ճառագրական սկզբնաւորութիւնը: Յեղանակներու բովանդակութիւնը տուած է հեղինակը Ընծայականին մէջ:

Որովհետեւ այժմեան խմբագրութեան մէջ թէ յեղանակներն եւ թէ բովանդակութիւնը կրած են փոփոխութիւն, հիմնուած 540—595 տարիներու պատմական իրադարձութիւններու վրայ, պիտի փորձեմ ուրուագծել Ա.—է յեղանակներու բովանդակութիւնն այնպէս, ինչպէս կ'ենթադրէ Սկզբնաղբիւրն Ընծայականին համեմատ:

(Բ. Մնաց. Լ. 8 եւն. Ես. Լ2. 3). «Յովսափատ... ի վերայ յիշատակաց» (Բ. Քաղ. Բ. 16 եւն). «զբեցաւ ի յիշատակս» (Եսթ. Թ. 32): 5. «Յիշատակաց քաղաք» կոչուած է Եւեմ. Բ. 5 գերեզմանաց տեղիք: 6. Մութ է՝ «Գրեցաւ զամենայն ճառագրական յիշատակարանս» (Եւս. Բրոն. Ա. 359), ուր քիչ յետոյ բացայայտ կը գրուի «մատենաց յիշատակաց»: Այսպէս Ե.—2. դարերու մատենագրութեան մէջ:

Եղիշէի հետեւեալ տեղիքները կ'իմանան «Յիշատակարան» նիւթական իմաստով, իբրեւ լաւ կամ վատ յիշատակներու ընդունարան կամ յիշատակազիւրք, այս ինքն Պատմութիւն: 1. «Գրեցաւ յիշատակարանս այս փասն նորա, առ ի կշտամբունն յանդիմանութեան մեղաց նորա» (109): 2. «Որպէս մեք իսկ ունիմք զանուտ յիշատակարանսն զառաքելի նախնեացն ձերոց» (55): 3. «Ընթեցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին եւ գլխաւորակարանսն նախնեացն» (55): Որովհետեւ երեք տեղիքներու մէջ ալ Յիշատակարանին առումը անձանթ է հնազոյն շրջանին, բառին նուիրական գործածութիւնը մոռցուած է արդէն, պէտք է վերադրել այս տեղիքները խմբագրիչին: Եւ արդէն թէ առ թէպէտ թուղթն եւ թէ անոր յաջորդող խորհրդածութիւնները, ինչպէս նաեւ ամբողջ Ի. Յեղանակը յայտնապէս անհարգատ են սկզբնաղբիւր Եղիշէին (հմտ. նաեւ մեր զիտողութիւնը «Բնագիր» բառին առթիւ):

Միայն պատահական զուգադիպութեամբ է «անուտ յիշատակարանք» ասութեան երեւումը հետեւեալ կոչումներու մէջ. «Չորոյ ստութիւնն անուտ յիշատակարանք մեր յանդիմանին» (Թուղթ Վրթանէս Գրք թղթոց, էջ 119): «Այսպէս ունի պատմութիւն անուտ յիշատակարանաց մերոց» (նոյն առ նոյն. անդ, էջ 143. սակէ՛ Անանուն ժամանակագրութիւն, Վենետիկ 1904, էջ 73). «Որպէս նոյն ինքն յիշատակարանք պատմեան». 2. Բ. Ս ա ը զ ի ս ե ա ն՝ Արրասամ թուղթն. Վենետիկ 1899, էջ 8. հմտ. առ այս՝ Հ. Ն. Ա. կ ի ն ե ա ն՝ Վրթանէս Վարդապետ Բերթոյ. Հ ա ն զ. Ա մ ա. 1910, էջ 42:

Պէտք է նկատել, որ այս բովանդակութեամբ ո՛չ միայն կը վերականգնուի յեղանակներու կապակցութիւնն եւ յաջորդութիւնը, այլ եւ կը գտնեն յեղանակները համեմատական չափ: Չենք կրնար տարակուսիլ, որ պատմագիրը հատուածելով իւր մատենը եօթը զլուսններու, չէ դիտած գոնէ մերձաւորապէս պահպանել անոնց համեմատական տարածութիւնը կամ ընդարձակութիւնը: Խմբագիր օրինակին մէջ, ուր ըստ կամի կը ճատուած, ընդարձակուած նաեւ տեղափոխուած են հատուածները, այսպիսի համեմատական չափ չի տեսնուիր:

Մատենին այս բաժանումները անուանած է մատենագիրը «զլուսն» կամ լաւ եւս «յեղանակ»: «Յեղանակի» տակ կ'իմանայ ժամանակի շրջանը<sup>1</sup>. ուստի եօթը ժամանակի շրջաններու մէջ նկատի առած է ժամանակակից պատմութիւնը. այս յեղանակներն են՝ մերձաւորապէս.

- Ա. 540—570. Ժամանակ:
- Բ. 570—572. Իրացն պատահումն:
- Գ. 572—576. Միաբանութիւն Ուխտին:
- Դ. 575—576. Երկաղառակութիւն Ուխտին:
- Ե. 576. Յարձակումն Արեւելայց:
- Զ. 576—577. Ընդդիմանալն թաղաւորին Պարսից:
- Է. 577—595. Յերկարումն իրացն խոռվութեան:

Ա. Յեղանակին մէջ կը խոստանայ հեղինակը նկարագրել «Ժաւանակն» այս ինքն այն շրջանը, որ կը կանխէ «իրացն պատահումն». ուստի 571 տարին: Կը բաղձայ ուրուագծել սասանեան ազգին հետապնդած կրօնական քաղաքականութիւնը, թէ ինչպէս «քաղում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նովին օրինօք (մոզուցն) մտանէին. սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի

<sup>1</sup> «Յեղանակ» այս իմաստով միայն կարելի է ենթադրել Եղիշէի բով. հմտ. եւ առ Միհր-Ներսէս թղթին մէջ (էջ 26). շրջապատութեամբ չորեք յեղանակ կատարեալք՝ գործեն գտարեւոր պատմագրութիւնն: Բառիս հնազոյն գործածութեան կը պատահիմ աստիճան անգամ Աղաթանգեղոսի բով. «այլ իրք որ եղեալք վասն յեղանակաց յեղափոխ ժամանակաց մարտարիս պատերազմաց» (էջ 10): Հաւանօրէն Եղիշէ հոս հետեւող մըն է Աղաթանգեղոսի աստիճան, զանազանելով նոյնպէս ժամանակի յեղանակները (շրջանները): Եւր Հայկազնեան Բաղդաթի մեկնութիւնն իր «զանապատեալ վիճակ իրաց, կամ անցից անցելոց. ըստ նմին եւ գրուի բանից» հիշք չէ Եղիշէի այս տեղւոյ համար:

որդույն Տիրանայ. եւ կուէր մինչեւ յամն վեցերորդ Արտաշեսի արքայի Հայոց որդւոյ Վուամպայոյ» (տպ. Ստահրաչապոյ). ուրիշ խօսքով «ի սկզբանէ (տպ. սկզբան) Շապուոյ արքայից արքայի մինչեւ յամն յերկրորդ Յազկերտի արքայից արքայի որդւոյ Վուամպայ»<sup>2</sup>. երբ Հայ Արշակունի հարստութիւնը կը խախտուի յանձին Արտաշեսի եւ Պարսկական գերիշխանութեան տակ երկրին կառավարութիւնը կը յանձնուի մարզպաններուն, թէեւ սպարապետութիւնը կը մնայ Հայոց ձեռքը: Կը սպասուէր որ հեղինակը համաձայն ծրագրին նետէր թեթեւ ակնարկ մ'ալ մարզպաններու օրով ստեղծուած կացութեան մասին, յատկապէս այն 439—484 շրջանի վրայ, երբ Յազկերտ Բ. եւ Պերոզ Ա., նաեւ յետոյ Կաւատ փորձեցին ճնշել քրիստոնէութիւնը: Անշուշտ կային նախնական բնագրին մէջ նման ակնարկութիւններ. բայց խմբագրիչը, որ բովանդակ Ա.—Ը յեղանակները ուղած է վերածել Վարդանանց պատերազմի պատմութեան, նկատած է անսպասակ' այս կրկնութիւնը եւ յապաւած է ի բաց: Ամբողջ Ա. Յեղանակն առ հասարակ իւր այժմեան կերպարանքին մէջ չի թուիր սկզբնական: Անոր բովանդակութիւնը կամ կրկնութիւնն է Բ. Յեղանակին եւ կամ անկէ փրցուած էջ մը կը ներկայացնէ: Ինքն իւր մէջ չի կազմեր ամբողջութիւն, միասնական միտք, չ'ամփոփեր որոշ ժամանակ: Չունի նաեւ ինքնայատուկ սկզբնաւորութիւն, պատշաճ Նզդէի ճառագրական ոճին: Ամբողջը կը համարիմ խմբագրչէն: Ա. յեղանակի նախնական սկսուածքը պահպանուած է անաղարտ այժմեան Բ. յեղանակին սկիզբը: Շարունակութիւնը վերականգնելու համար պէտք է խնամով իրենց տեղերը բերել այն հատուածները, որոնք անկէ փրցուած գետնուած են այժմ Ա. յեղանակին մէջ: Օրինակի համար այժմեան Ա. յեղանակի վերջին հատուածները, յատկապէս այն մասը, ուր «Գարեգին» վկայի մասին կը խօսի, կը պատկանի այժմեան Բ. յեղանակին. սկզբնազրին մէջ Ա. զլխուն՝ «Ժամանակի» մէջ պատմուած էր այն: Ինչպէս բոլոր անունները, նաեւ այս անունը չարափոխուած է խմբագրչէն. ուր սկզբնազրին մէջ խօսքը

Գրիգոր—Մանածիհր Ռաժիկ վկայի († 541/2) մասին էր, հոս անոր անունը Գարեգին յորջորջուած է:

Այս տեսութեամբ Ա. Յեղանակը կը գտնէ իւր բովանդակութիւնը՝ Ժամանակը, որ յատկապէս 531—570 շրջանը կ'ընդգրկէ, Սոսրով Ա. Անուշըրուանի թագաւորութեան առաջին 40 տարիները, համաձայն հեղինակին խոստման. «բայց մեք թէպէտ եւ չունիմք հրաման բամբասել զիշխանս, եւ ոչ գովողք կարեմք լինել այնմիկ, որ աստուածամարտն լինի[ն]: Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, եւ ոչ դանդաղիմ» (13—14):

Բ. Յեղանակն՝ «Իրացն պատահումն յիշխանէն Արեւելից» կ'ենթադրէ «Հայոց պատերազմի» նախօրեակը, ուստի այն պատճառները, որոնք զրդիւ եղան Հայաստանի ապստամբութեան: Այժմեան օրինակին մէջ, Բ. յեղանակին նիւթ մատակարարած է նաեւ սկզբնազրին Ա. յեղանակը: Բ. յեղանակը սկզբնազրին մէջ իւր ելակէտն ունէր ըստ ամենայն հաւանականութեան Դենչապուհի Հայաստան գալը, ուստի այժմեան օրինակին էջ 19 պէտք է նկատել իբրեւ սկիզբ Յեղանակին, համարելով ճառական մուտքը յապաւուած: Դենչապուհ աշխարհագրի կ'ենթադրէ երկիրը, հարկերու նոր դրութիւնը կը տարածուի Հայաստանի վրայ, հարկատու կը հռչակուին նաեւ եկեղեցիները եւն: Քիչ յետոյ Հայաստան կ'ուղարկուի Սուրէն կանգնելու հոն ատրուշան. Հայերը կ'ընդդիմանան. եւ ի վերջոյ կ'ապստամբին: Թէեւ այս բովանդակութիւնը բազմօք այլակերպած է մեր առջեւ գտնուած խմբագրութեան մէջ, բայց անոր բազդատութիւնը Յովհ. Նփիսացւոյ հազորգած տեղեկութիւններու հետ կ'ընձեռէ միջոց վերականգնելու պատկերը գոնէ խոշոր գծերու մէջ (հմմտ. § 18):

Գ. Յեղանակ՝ «Միաբանութիւն սուրբ Ուխտին [Նկեղեցւոյ]»<sup>3</sup>: Այս խոստարանութեան համապատասխան չի թուիր այն բովանդակութիւնը, զոր կ'ընծայէ այժմեան օրինակը: Սկզբնազրիւրը կրած է հոս ալ սաստիկ այլակերպում: Խմբագրիչը, որ նախորդ զլխուն վերջերը պատմած էր նախարարներու ուրացութիւնն ի Տիրոն, այժմ անոնց գրգռութիւն յառաջ էր նկարագրէ, թէ ինչպէս մոգերու բանակը կ'ուղարկուէր ինչպէս արտաքինները եւ ինչպէս կը գրէ մեր մտերիմը՝ Սերիոս. «Իսկ առ Հայոց երդնոյր թագաւորն Յունաց եւ հաստատէր զնոյն ուխտ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց՝ երանելոյն Տրդատայ եւ Կոստանդիանոսի. եւ տայր օղջազ զգորսն կայսերական յօգնութիւն» (Սեր. 26): Այսպէս գոյութիւն առաւ հայ եւ յոյն բանակներու մէջ միաբանութիւն, եղբայրագրութեան անոնք պաշտպանելու պարսկական յարձակումներու դէմ հայ հայրենիքը, որ միացած էր այժմ Բիւզանդիոնի հետ Կայսեր դրօշին տակ: Թէպէտ խմբագրիչը խեղաթիւրելով ամբողջ պատմութիւնը չ'ուղբ ճանչնալ այսպիսի «միաբանութեան ուխտ» մը, բայց քիչ յետոյ Գ. յեղանակին մէջ կ'ընդգծէ ակամայ այն ներքին եւ սերտ աղերսը, որ եղած է հայ եւ յոյն բանակներու մէջ: Այս միաբանութիւնը կ'ակնարկեն նաեւ արքայից արքայի (Սոսրովի) խօսքերը, որ ի լուր Հայաստանի անակնկալ ապստամբութեան կը գոչէ սարսափահար. «Տեսէք զի ետուք գործել ինձ գոր ինչ ոչ կամէի, եղեն փասք մեծամեծք ի սահմանն ի մէջ երկուց անհաշտ թշնամեաց: Եւ մեք դեռ ի հեռուոր ճանապարհի. եւ ոչ մի ինչ գործ ի պատերազմիս ի գլուխ երթիս: Եւ դուք աստէն յիմում տանս յարուցէք ի վերայ պատերազմ, որոյ չարագոյն եւս լինելոց է կատարածն իւր քան զարտաքին թշնամեացն» (64): Կ'ենթադրէր Սոսրով թէ հայկական ապստամբութեան ետեւը կանգնած էր Բիւզանդիոն եւ նախերգանքն էր այն մեծ պատերազմին, որուն գոները բացուեցան արդեամբը:

<sup>2</sup> Ճշտագոյն պիտի ըլլայ կարգով՝ «մինչեւ յամն ութերորդ Վուամպայ (Գ) արքայից արքայի որդւոյ Յազկերտի» (Ա.) ուստի 428, որպէս զի համաձայն գայ Արտաշեսի 2. տարւոյն:

րու ուրացութիւնն ի Տիրոն, այժմ անոնց չուն կը նկարագրէ, թէ ինչպէս մոգերու բանակով կու գան կը մտնեն հայկական սահմանները. ինչպէս անոնց գալուստը գրգռութիւն յառաջ կը բերէ ժողովրդեան մէջ. եւ սպա եկեղեցականներն եւ նախարարները եւ ժողովուրդը սուրբ միութիւն կ'ուխտեն եւն:

Իսկական բովանդակութիւնը կը ներկայացնէ մեզի Գ. յեղանակին սկիզբը, ուր կ'ենթադրէ հեղինակը, թէ պատմուած է նախընթացին մէջ երկու կամ երեք ճակատամարտներու մասին, ուր թշնամին չէ կրցած զիմակալել հայ միացեալ ուժին. «մինչեւ ցայս վայր ոչինչ կարի զանգիտէի պատմել զհարուածս ազգիս մերոյ, որ յարտաքին թշնամեաց ճամարտութեանն չար յարեան ի վերայ մեր. որք սակաւագոյնք (սակաւագոյնք?) հարին զմեզ, եւ յուրագոյնք (յուրագոյնք?) հարեալ գտան ի մէջ. քանզի դեռ եւս միաբանք եւ հաւատարմ էաք... որպէս յերկուս եւ յերիս տեղիս ոչ կարացին կալ առաջի» (69—70): Նոյնը կը կրկնուի ապա նաեւ Վարդանի բերնով. «Իսկ արդ յերկուս եւ յերիս կուս Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օղնեաց մեզ» (79). «զգօրսն արքունի չարաչար հարաք» (79): Այսպիսի կրկնակ եւ ետեակ պատերազմներ թէպէտ ակնարկուած էին հարեանցիօրէն, բայց չէին նկարագրուած նախորդ զլխուն մէջ, ուր քիչ մը երկար խօսք եղած էր միայն Սաղիսազ գիւղի մօտերը խմբուած պատերազմի մասին՝ հետեւողութեամբ Գ. Փարպեցւոյ: Ուստի հարկ է ենթադրել թէ սկզբնազրիւրը անոնց իւրաքանչիւրին վրայ խօսած էր մանրամասնօրէն: Եւ որովհետեւ այդ յաղթութիւնները միջնաշխարհէն դուրս հանած են բանակները, նաեւ մինչեւ Սիւնիք, Աղուանից աշխարհը, նոյն իսկ Ատրպատական խորամուխ, բախած են անոնք արքունի զօրքին հետ եւ յետս մղած, եւ այս ամէնը երբ բանակները «միաբանք եւ հաւատարմ» էին, պէտք է հետեւցնել թէ «Միաբանութիւնն սուրբ Ուխտին» ոչ լոկ ներքին ոյժերու համախմբութիւնը կ'ամփոփէ, այլ եւ արտաքին ոյժեր կ'ընդգրկէ, զիմակալելու համար հօր պետութեան մը, ինչպիսի էր պարսկականը, ուռճացած, սոնքացած երկար խաղաղութեան տարիներու ընթացքին:

«Միաբանութիւնն սուրբ Ուխտին» կ'ենթադրէ եւ Գ. յեղանակը, որ կը նկարագրէ 572ին Հայոց եւ Յունաց մէջ, ապստամբութեանն անմիջապէս ետքը, ինչպէս կը պատմեն արտաքինները եւ ինչպէս կը գրէ մեր մտերիմը՝ Սերիոս. «Իսկ առ Հայոց երդնոյր թագաւորն Յունաց եւ հաստատէր զնոյն ուխտ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց՝ երանելոյն Տրդատայ եւ Կոստանդիանոսի. եւ տայր օղջազ զգորսն կայսերական յօգնութիւն» (Սեր. 26): Այսպէս գոյութիւն առաւ հայ եւ յոյն բանակներու մէջ միաբանութիւն, եղբայրագրութեան անոնք պաշտպանելու պարսկական յարձակումներու դէմ հայ հայրենիքը, որ միացած էր այժմ Բիւզանդիոնի հետ Կայսեր դրօշին տակ: Թէպէտ խմբագրիչը խեղաթիւրելով ամբողջ պատմութիւնը չ'ուղբ ճանչնալ այսպիսի «միաբանութեան ուխտ» մը, բայց քիչ յետոյ Գ. յեղանակին մէջ կ'ընդգծէ ակամայ այն ներքին եւ սերտ աղերսը, որ եղած է հայ եւ յոյն բանակներու մէջ: Այս միաբանութիւնը կ'ակնարկեն նաեւ արքայից արքայի (Սոսրովի) խօսքերը, որ ի լուր Հայաստանի անակնկալ ապստամբութեան կը գոչէ սարսափահար. «Տեսէք զի ետուք գործել ինձ գոր ինչ ոչ կամէի, եղեն փասք մեծամեծք ի սահմանն ի մէջ երկուց անհաշտ թշնամեաց: Եւ մեք դեռ ի հեռուոր ճանապարհի. եւ ոչ մի ինչ գործ ի պատերազմիս ի գլուխ երթիս: Եւ դուք աստէն յիմում տանս յարուցէք ի վերայ պատերազմ, որոյ չարագոյն եւս լինելոց է կատարածն իւր քան զարտաքին թշնամեացն» (64): Կ'ենթադրէր Սոսրով թէ հայկական ապստամբութեան ետեւը կանգնած էր Բիւզանդիոն եւ նախերգանքն էր այն մեծ պատերազմին, որուն գոները բացուեցան արդեամբը:

Սուրբ ուխտի միաբանութեանն ետքը սկսան անմիջապէս պատերազմական գործողութիւնները. Կարնոյ հռովմէական բանակը մտաւ Պարսկահայաստան, միացաւ հայկական բանակին հետ: Որովհետեւ պարսիկը անպատրաստ էր դեռ կուսի. այս պատճառաւ ալ պարսկական առաջին երեք յարձակողականները՝ Վարդան Վշնասայի, Միհրան Միհրեանդակի եւ Փիլիպպոս Սիւնեաց իշխանի առաջնորդութեան տակ մղուած, խորտակեցան եւ միացեալ յաղթ բանակները կրցան յաղթական յառաջանալ մինչեւ Սիւնիք, Աղուանք եւ Ատրպատական, ըլլալ մի-

չամուխ մինչև Վրկանի ծովը եւ սակաւ հեռաւորութենէն սպառնալ Պարսից մայրաքաղաքին: Դժբախտաբար այս շատ կարեւոր արշաւանքներու մասին այժմ հաղիւթեթեւ ակնարկութիւններ միայն մնացած են Եղիշէի մէջ, բայց այդ բեկորներն ալ բաւական են՝ հիմնուած այլուստ ծանօթ աղբիւրներու վրայ՝ վերականգնելու Գ. յեղանակին բովանդակութիւնը: Այսպէս, թէ յիշուած յաջողութիւնները հայ-հռոմէական բանակներու միացեալ ոյժին արդիւնքն էին, բացայայտ կը տեսնուի հետեւեալ տեղիքէն. պատերազմի սկիզբը շատ հայ աւագներ եւ եկեղեցականներ փոխադրուեցան բիւզանդական հող եւ հասան մինչև Կ. Պոլիս (հմմտ. Յովհ. Եփեսացի, Բ. 18): Երբ միարանալ բանակները յաջողութիւններ ունեցան թշնամոյն վրայ, եպիսկոպոսները զբեցին թղթեր ուրախութեան «եւ ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն (Կ. Պոլիս) առ սուրբ ուխտ եկեղեցոյն, զի եւ նոքա աղօթս անելով խնդրեցեն յԱստուծոյ, որպէս սկսաքս ի նմին եւ կատարեսցուք» (62): Ուստի ուրախակցութեան հրաւիրած են ո՛չ հայ փախստականներն միայն, այլ եւ Յոյները: Այս մասին տես նաեւ քիչ յետոյ:

Գ. Յեղանակ՝ «Երկայտակուրիւն ումանց բաժանելոց ի նմին սուրբ Ուխտէ»: Խմբագրելը, որ Եղիշէի վարդանանցէն վասակագիրք մը յերկրել կը ձգտի, այս խոստարանութիւնը խեղաթիւրած եւ վերածած է «վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց եւ անօրէն ընկերաց իւրոց» (ճշտագոյնս՝ «ընկերաց նորա»): Սկզբնազրին բովանդակութիւնը դարձեալ բեկորներով միայն մնացած է: Երբ միարանալ բանակները արագ արագ կատարեցին յաղթութիւններ, զգաց պարսիկը, թէ աննպատակ է գլխաւոր սաղմագառ Կովկասեան լեռներն ընտրել. մինչ ինքը փոքր ընդհարումներով կը ջանար անոնց յառաջխաղացութիւնն արգելել, իւր կարեւոր ոյժերը կը կենդրոնացնէր Միջագետք: Հայ-բիւզանդական բանակը հեռաւոր արեւելքի մէջ մասնուեցաւ անդործութեան: Սկսան թուլանալ ոգիք: Ծագեցան անհամաձայնութիւններ եւ արտունջներ բանակին մէջ, որոնց համար շատ պատճառներ կային. երբ յապաղեցաւ ամբիներով ոռճիկին վճարումը, բմբոստացան զօրականները Կայսեր զէմ. ասոր հետեւութեամբ թուլացաւ նաեւ

զինուորական կարգապահութիւնն եւ բարոյականութիւնը. զօրքը սկսաւ կեղեքել քրիստոնեայ ժողովուրդը եւ այսպէս առիթ տալ անոր աժդոհութեան. լուեցան անհամաձայնութիւններ նաեւ կրօնական-գաւառարանական հողի վրայ: Անշուշտ թշամին ալ չունեցաւ զոյզն մասնակցութիւն՝ միջնորդութեամբ Սիւնեաց իշխանին՝ որ յարած էր Պարսիկներուն, աւելի եւս բորբոքելու այս անհամաձայնութիւններն եւ աժդոհութիւնները: Այսպէս ծայր առած եւ արծարծած էր երկպառակութիւնը ճամբարէն ներս. սկսած էր թուլանալ ժողովրդեան համակրութիւնը հանդէպ յունական բանակին: Իսկ պարսիկը ներողամիտ գտնուելու եւ միւսանգամ իւր հովանաւորութեան տակ առնելու հրապոյրներով կը ջանար սերաշահիլ իր հին հպատակները: Այս խնդիրներն էին Գ. յեղանակին նիւթերը սկզբնազրին մէջ:

Ե. Յեղանակ «Յարձակումն Արեւելեաց»: Այս գլուխը կը բացակայի այժմեան օրինակներու մէջ: Յունական բանակին պարտութիւնը կը պատմուէր հոն. բնականաբար խմբագրելը, որ սկիզբէն մերժած էր ճանշնալ Յունաց ձեռնառութիւնը հայկական մեծ ապստամբութեան մէջ, չէր կրնար տեղ չորհել իւր խմբագրութեան մէջ այս յեղանակին: Եղիշէի պատմութեան կարգը կը պահանջէր առանձին յեղանակով նկարագրել երկպառակութեան հետեւութիւնը: Երբ թուլացան միարանութեան ուխտի ջիգերը, երբ խորամանկ պարսիկը իւր լրտեսներով — նկատելու է անոնց թուին մէջ միշտ Սիւնեաց տիրոջ աւագ զերը — խմացաւ թշնամի բանակին ներքին պառակտումներն եւ աստանդական վիճակը, ուղարկեց Տամ-Սոսրովը սակաւաձեռն բանակով անոր վրայ. Մարզպանին յեղակարծումն երեւումը շիթ եւ սարսափ արթնցուց անպատրաստ յունական բանակին մէջ. որ լքած զէնքերը գլխեց վայրագ փախուստի. հօր բանակը յսկան թօթափել քայքայուեցաւ, ցրուեցաւ, ոչնչացաւ. յաղթական պարսիկն առանց սուրբ պատանէն հանելու՝ անաշխատ նուաճեց ապստամբած աշխարհը, տիրացաւ իւր նախկին սահմաններուն: Տամ-Սոսրովի այս յարձակման մասին է Գ. յեղանակի վերջը պատմուած պատերազմական խորհուրդը:

Յունական բանակին կրած այս ամօթալից պարտութիւնը խորտակեց հայկական յոյ-

սերը. ինչպէս նաեւ ոչնչացուց Բիւզանդիոնի տաճած ակնկալութիւնները. պատերազմը ամբողջութեամբ կը փոխադրուէր այնուհետեւ բիւզանդական Հայաստան եւ Միջագետք: Եւ ունէր առիթ Եղիշէ Գ. յեղանակին սկիզբը՝ նկատելով միարանութեան ուխտին քայքայումը՝ արձանագրելու թէ միացեալ ոյժերու խորտակումը «պատճառք եղեն բազմաց կորստեան, ոմանց երեւելեացս միայն եւ այլոց երեւելեաց եւ աներեւութից». եւ դարձեալ թէ. «Եւ այն եւս չար է քան դամենայն. դուռն՝ գոր բացին կորստեան, Աստուծոյ միայն կարողութիւնն է փակել գնալ ըստ մարդկան սահման՝ ահա անցեալ է հնար 4»: «Այլ յայտ տեղուջ ոչ միայն ի վերայ միոյ ազգի է ողբումնս մեր, այլ ի վերայ ազգաց եւ աշխարհաց. զոր եւ յառջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ եւ ոչ խնդութեան մտօք» (69): Եղիշէ մը 451ի հայկական ապստամբութեան վերջալոյսին այսքան տխուր պատկերներու պիտի չըլլար անձնատուր եւ ոչ ալ պիտի ըլլար այնպս խաղաղութեան արշալոյսէն: Ապստամբութիւնը վարդանի մահուամբ նոյնհետայն նուաճուած էր, առանց ազգեր եւ աշխարհներ իրար ձգելու:

Զ. Յեղանակ. «Ընդդիմանալն Հայոց պատերազմաւ քագաւորին Պարսից»: Վերջին երկու բառերը կը պակսին Ընծայականին մէջ. բայց պահուած են այժմեան Զ. յեղանակին վերնագրին մէջ: Յեղանակիս ճառական սկզբնաւորութիւնը՝ «Մեծ է սէրն Աստուծոյ» հաւանօրէն չի վերաբերիլ այս յեղանակին. կը պատշաճի աւելի ճշդութեամբ է. յաղանակի բովանդակութեան. տես այս մասին քիչ յետոյ:

Պատմութեան շարունակութիւնն է պատմուած հոս: Ծերունին Սոսրով անձամբ երեւցած էր սաղմագառ իւրոյ՝ որ այժմ Միջագետքն է: Լի բարկութեամբ կ'սպառտակէ բիւզանդական զաւառներ, այրացաւեր կը կործանէ քաղաքներ հռոմէական Միջագետքի մէջ. Դարա անառիկ բերդաքաղաքը զբաւում էր արդէն. գերող գերվող արշաւանքներով կը սպառնար նաեւ միջերկրեայ գաւառներուն: Մեկտիւնէի վրայ ծառայած էր արդէն ծուխը, երբ պատահեցաւ իրեն

<sup>4</sup> Կահնարիկ այն երկարժամանակեայ խաղաղութեան բանակցութիւնները, որոնք տեղի ունեցան այս պարտութենէն ետք սահմանին վրայ, առանց հետեւութեան: Կոիւները շարունակուեցան մինչև 590:

հռոմէական բանակը եւ ստիպեց ճակատամարտի: Զուր տեղ գիշերախառն փախուստով խոյս տալ փորձեց Սոսրով. Մեկտիւնէն ոչ շատ հեռու Եփրատի ափունքին վրայ խափանեց հռոմէացիին իր անցքը. սաստիկ ընդխառնման մէջ կրեց պարսիկը սարսափելի կորուստ. փախստականներու մեծ մասը դետամոյն ոչնչացաւ. հազիւ զոյզն մնացորդով կրցաւ Սոսրով ափին միւս կողմը հասնիլ եւ հապճեպ փախուստով անմատոյց լեռներէ Աղձնիքի մէջ հանդիստ գտնել: Սերիոս այս հոյակապ յաղթութիւնը վարդան Մամիկոնեանի կը վերագրէ. ուստի հայկական բանակը ունեցած էր մասնակցութիւն այս մեծ ճակատամարտին մէջ: Անոր պերճ նկարագրութեան զոյզն մնացորդն միայն պահուած է այժմեան օրինակին մէջ, ուր սաղմագառը Արտազ, Տղմուտի ափերու վրայ է փոխադրուած, եւ ահեղ պատերազմին յաղթական վերջաւորութիւնը նախագուած է՝ պահպանելու համար համաձայնութիւն Ղաղարի տեղեկութեանց հետ, որուն համեմատ Աւարայրի ճակատը վարդանի մահուամբ ձախողած էր: Յետոյ պիտի ունենանք առիթ վերադառնալու ճակատամարտիս, ուր ցոյց պիտի տանք նաեւ այն անհեղեղ հակասութիւնները, որոնք կ'երեւան ներկայ խմբագրութեան մէջ. յատկապէս թէ ինչպէս 60.000ը բախելով երեքպատիկ ուժի զէմ ահեղ ճակատամարտի մէջ եւ ջախջախուելով՝ միայն 287 կորուստ կ'ունենայ: Բայց եւ այնպէս ճարտար զբոյն գեղեցիկ նկարագրութիւնը այս տեղ մասնաւորապէս կու գայ երեւան:

Է. Յեղանակ՝ «Երկարումն իրացն խոռվութիւն»: Սոսրով թէպէտ կրեց ահազին պարտութիւն Մեկտիւնէի առջեւ, բայց չխոնարհեցաւ իւր գոռոզութենէն: Կրկին հաւաքելով ոյժերը փորձեց յարձակում մ'ալ կարնոյ վրայ. բայց անոր անմատոյց պարիսպներու առջեւէն դարձաւ կորակոր եւ գնաց արքունիքը հանգչելու: Պատերազմներու առած ընթացքը ի նպաստ իւր էր: Պարսկահայաստանը նուաճուած էր. Դարա բերդաքաղաքը դեռ իւր ձեռքը կը գտնուէր: Խաղաղութիւնը կը բաղձար ինքն ալ. բայց խաղաղութեան համար երկուստեք ստաբուած բանադնացները հակառակ տարեւոր վիճումներու չյանգեցան որոշ եղրակացութեան. ծանր էին արքայից արքայի պահանջը-

ները. անդիջող էր Կայսրը: Խոսքով մեծազորմար ոսկի եւ ապստամբութեան պարագլուխները կը պահանջէր. Տիրերիոս կը մերժէր տալ եւ մէկն եւ միւսը. բայց կը պնդէր որ Դարան վերադարձուի անպայման: Յաճախ սկսուած բանակցութիւններն այսպէս առանց հետեւանքի ընդունայնացան: Կոիւները շարունակուեցան մինչեւ Խոսրովի մահը († 579). նաեւ այնուհետեւ մինչեւ 590: Այսպէս Միջագետքի մէջ:

Հայաստան Տամ-Խոսրովի յարձակումովը եւ հռովմէական բանակի նահանջումովը նուաճուած էր արքայից արքայի իշխանութեան տակ: Հռովմէական բանակին հետ միարանած հայկական զորախումբերու մեծ մասը վերադարձաւ եւ մտաւ Պարսից ծառայութեան մէջ: Բայց մնացին Կայսեր հաւատարիմ այն նախարարները «որ ոչ քակտեցան ի սուրբ Ուխտէն»: Անոնք փոխադրուած էին իրենց ընտանիքները Կ. Պոլիս, արդէն պատերազմի սկիզբը, երբ նաեւ Կաթողիկոսն եւ այլ եպիսկոպոսներ փնտռուած էին ապահովութիւն բերանդական հողի վրայ՝ քրիստոնէայ Կայսեր պաշտպանութեան տակ եւ հասած մինչեւ Կ. Պոլիս եւ հոն վայելած Կայսեր մեծապատիւ եւ մեծապարգեւ հիւրամեծարութիւնը: Պարսկահայաստանի նուաճումն եւ Խոսրովի վրէժխնդիր ցասումը, հանդէպ ապստամբութեան պարագլուխներուն համարձակութիւն չտուին փախստականներուն վերադառնալ հայրենիք. «Բաղում ձմերաց հալեցան սառնամանիք... եւ նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիւն իւրեանց» (257): Կենթադրուի թէ ռազմադաշտերու վրայ նահատակուող նախարարներէն եւ սեպուհներէն ոմանք ալ մնացին պատուոյ դաշտին վրայ, եւ ուրիշներ ալ ինկան վրէժխնդիր թշնամւոյն ձեռքը գերի<sup>5</sup>: Կաթողիկոսը վախճանած էր Կ. Պոլիս. նոյնպէս շատերը: Առ Սորմեն ստրատելատ եւ Հայոց զորավար գրուած թղթին մէջ (606<sup>6</sup>) կ'ըսուի. «Նեոին ասպնջական եւ առաջնորդ եւ Կարապետ զնա պարտի ասել, որ ազգի միոյ ապստամբութեան եղեալ պատճառ, եւ զարս ի կանանց վարատելոյ եւ զկանայս յարանց, յորոց բազումք թափառական կենաւ ի տար աշխարհ վախճանեցան, թաղման ան-

գամ ոչ լեալ (տպ. լինել) արժանի» (Գիրք Թղթոց, էջ 93):

Այս բովանդակութեան պիտի պատշաճէր ամէնէն աւելի այն ճառական սկսուածքը, որ Զ. (Ն.) Յեղանակին նախարարն կը կազմէ: Կ'ըսուի հոն. «Մեծ է սէրն Աստուծոյ... եւ այնպէս աներկիւզս առնէ զմարդիկ իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց: Որպէս անդատին ի սկզբանէ է տեսանել (ի Ս. Գրոց) զբազումս բազում անգամ ի բազում տեղիս. մարդիկ, որ սիրովն Աստուծոյ իբրեւ զինու վառեալք էին, ոչինչ խնայեցին զանգիտելով... կամ ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց՝ ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յօտարութեան... Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ եւ աշխարհս Հայոց» (էջ 76): Այս հայեցակէտն եղած է վարդան Մամիկոնեանի, որ «միարանութեամբ նախարարացն որ ոչ քակտեցան ի սուրբ Ուխտէն» առնելով զօրքը խաղաց զնաց դէպի յունական բաժին: Այս սկզբնաւորութեան վերջարանութիւնն է «Անուանք նախարարացն» (էջ 150—155) եւ «Իսկ կանայք երանելի առաքինեացն» հատուածներն, որոնք անջատուած զետեղուած են Ը. յեղանակին վերջը (էջ 155—158):

Ուստի նաեւ հոս համաձայն է ժամանակի պարագաներուն է. յեղանակի խոստարանութիւնն ըստ Ընծայականին: Խմբագրիչը ընականաբար պիտի չզտնէր հոն իւր նպատակին համար շահագործելու նիւթ. այս պատճառաւ ալ աշխատութիւն յանձն առած է ուրոյն վերջարանութիւն մը յօրինել. առ այս նիւթ մատակարարած է իրեն Գ. Փարպեցի:

Նոյն ազգիւրէ ծծուած է հիւթը նաեւ Ը. յեղանակին համար: Հոս մինչ Ղեւոնդեանց քահանայից նահատակական կատարածն եւ Խորէն եւ Արրահամ երէցներու խոստովանական կեանքը կը պատմուին Գ. Փարպեցւոյ հետքերու վրայէն ընթանալով, ի կատարածին կրկին Եղիշէի դիմած է խմբագրիչը եւ հանած անկէ նախարարներու եւ Տիկնանց մասին հատուածներ: Սկզբնագրին մէջ առանց տարակուսի նուիրուած էին խօսքեր նաեւ Եկեղեցականներուն, յատկա-

<sup>5</sup> Հմմտ. 62. «Զի թերեւ կարացեն գեղարար իւրեանց ի նեղութեանն զօղանալ» եւն:

պէս Յովհաննէս Գարեղինեցւոյ, Հայոց Կաթողիկոսին: Թերեւս ուշագիւր ընթացմամբ բերուին երեւան Ղեւոնդեանց եւ Խորէն եւ Արրահամ խոստովանողներու վերաբերեալ մասերու մէջ ալ հատուածներ, որոնք Սկզբնագրէն ըլլան: Այսպէս ուր կ'ըսուի թէ «Յոյնք երանի ետուն վասն նորա աշխարհիս Հայոց» (149) զժուարաւ թէ Արրահամ խոստովանողի մասին իմացուի, որ Ասորիստանէն վերադարձած Հայաստան՝ հաղիւ թէ իւր սրբակեաց վարքով հռչակուած ըլլար Յոյնքունք քով, անոնց հիացմունքն եւ սուրբ նախանձը շարժելու չափ: Կ'ենթադրէ այդ տեղիքը մէկը, որ ապրած է ժամանակ մը յունական շրջաններու մէջ, այս ինքն մէկն այն զաղթական հայ եկեղեցականներէն, որոնք Կ. Պոլիս կամ այլուր ճգնեցան, համբաւուեցան եւ ապա վերադարձան հայրենիք: Նման բարեհամբաւներու թուին մէջ էր եւ Եղիշէ:

«Անուանք Նախարարաց» ամբողջապէս հաւաքուած են Գ. Փարպեցւոյ Բ. Գրուածքէն. բայց Սկզբնագրին հարադատ են յաջորդող պատմական մասերը փոփոխելով զփոփոխեալն: Պատմիչը նկատի ունի հոս 590—595 տարիներու դիպուածները. ուստի յապաւուած են 579—590 տարիներու — Որմիզը Գ. ի զահակալութեան շրջանի — դէպքերը: Սասանեան տունն իւր ճգնաժամային օրերը կ'ապրի. Որմիզը Թ. տարւոյն ապստամբութեան դրօշը պարզած էր Վահրամ Միհրեանդակ ի Միհրան տոհմէ. եւ հռչակած ինք զինքը թագաւոր՝ հօր բանակով մը կը խաղար Որմիզը վրայ: Սասանեան զահին վերահաս վտանգին իրազեկ՝ կը փութայ Վաստամ, Ասպարապետի որդին, Վնդոյի եղբայրը ձերբակալել արքայից արքայն Որմիզը, փորել աչքերն եւ սպաննել. ապա դայեկարար պաշտպան հանդիսանալով արքայորդոյն Խոսրովի, կը հռչակէ յաջորդ արքայական զահին վրայ: Նորընտիր արքայն Խոսրով անբաւական զգալով իւր ոյժը՝ խոյս կու տայ Վահրամ Չորինի առջեւն. ապաստան կը փնտռէ իւր թշնամւոյն՝ Կայսեր քով: Խոստանալով Մօրիկին Պարսկահայաստանի մէկ մասն եւ Միջագետքէն երկրարաժիններ, կ'ընդունի կայսերական օգնութիւն պաշտպանելու իւր զահը Վահրամի դէմ: Կը խորտակի Վահրամ. Խոսրով կը տիրանայ զահպած՝ իբրեւ Պերոզ-Վաստամ օսոխ կան-

գնած է արքայից արքային: Հինգ տարի շարունակուեցան կռիւները. Խոսրովին յաջողեցաւ ընկճել նաեւ Վաստամը. եւ այսպէս իբրեւ միահեծան տէր՝ տիրացաւ Պարսկաստանի (595/96):

Եղիշէ հանդիսատես էր հեռուէն այս անցքերուն. անոնց մասին են Ը. յեղանակի 153—155 էջերը: 590ին, երբ սպանուեցաւ Որմիզը, բացուեցան բանտերու դռները, արձակուեցան կալանաւորները. անոնց թուին մէջ էին անշուշտ նաեւ հայ նախարարները: Երբ ընտանեկան կռիւները շարունակուեցան, խոսնուեցան բնականաբար նաեւ հայ նախարարները արքունի բանակին հետ եւ երեւցան ռազմադաշտին վրայ: Այն հինգ տարիները, զորոնք կը յիշէ Եղիշէ (155) պէտք է իմանալ 590—595/96 շրջանը, երբ Խոսրով՝ Վահրամ եւ Վաստամ ինքնակոչ թագաւորներու դէմ կը մաքառէր: Ուստի երբ զգաց ապահովութիւնը զահը, արձակեց նախարարները հայրենիք, շնորհելով իրենց կրօնի ամէն ազատութիւն (Հմմտ. Սեր. 46):

Խմբագրիչը նաեւ այս տեղ՝ Գ. Փարպեցւոյ ազգեցութեան տակ՝ կրճատած եւ ազատազած է Սկզբնագրից: Տողբս՝ «Կրտսեր որդւոյն Յաղկերտի դայակն Ռահամ անուն ի Միհրան տոհմէն... ձերբակալ արարեալ զորդի թագաւորին՝ անդէն ի տեղւոյն հրամայէր սպանանել» յայտնապէս 590ի դէպքերը կ'ակնարկեն. Վաստամ էր, որ դայեկարար իւր պաշտպանութեան տակ առաւ Խոսրովը, կապեց անոր զուլթը թագ. ձերբակալեց զՈրմիզը՝ արքայից արքայն եւ «անդէն ի տեղւոյն հրամայէր սպանանել»: Իսկ «ի Միհրան տոհմէն» կը սերէր Վահրամ Չորին: Ուստի Վաստամ եւ Վահրամ անունները հոս ի մի ձուլուած՝ տուած են «Ռահամ» ձեւը: Այս նկատմամբ յետոյ աւելի ընդարձակ:

Վահրամ Միհրեանդակի ինչպէս ապա նաեւ Պերոզ-Վաստամի նպատակն էր՝ թագը կորցել Սասանեան տնէն եւ այսպէս վերջ տալ Սասանեան հարստութեան, որ մանաւանդ վերջին դարուն նկատուած էր անհանդուրժելի: Վահրամի թուղթն առ Մուշեղ Մամիկոնեան, որուն մէջ Հայոց նիզակակցութիւնը կը խնդրէր իր առաջադիր նպատակին համար, կը կարգանք ի մէջ այլոց. «Ես եւ դուք միարանութեամբ բարձուք ի միջոյ զտիեզերական պատուիսն՝ գտունն Սասանայ... Ոչ ապաքէն տունդ Սասանեան երարձ գեր-

կիրոզ ձեր եւ զտէրութիւն. եւ կամ ընդէ՞ր բնաւ ապստամբեցին հարքն ձեր եւ գնացին ի ծառայութեան նոցա, մինչեւ ցայսօր պատերազմեալ ի վերայ աշխարհին ձերոյ» (Սեբ. 37):

Այս սողերու ազդեցութեան տակ չէ՞ր գրէր Եղիշէ հետեւեալ ուշագրաւ սողերը. «Նաեւ արջը օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնս (սպ. հզօրագոյնք) կոռնին... Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին՝ չզգան. եւ եթէ հարկանեն՝ չիմանան. եւ իբրեւ ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անմինս իւրեանց մարտ եղեալ կոռնին: Ի դէպ իսկ ելանէ բան մարգարէին ի վերայ նոցա. Այր, սոս, առ քաղցի իւրում չըջեցի եւ կերիցէ զկէս անձին իւրոյ՞: Նման դմին եւ Տէրն ինքնին սոս. Ամենայն տուն եւ քաղաքաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն: Արդ զի՞ կոռնիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ չէլջանիս. զի՞ կոռնիս ի խորհուրդ գայնասիկ, որոց գոգիսն ձեր ի ձեռք քաղեալ հանեալ է՝ զանապականդ յապականութիւն եւ զապականելի մարմինդ գէշաքարչ արարեալ՝ իբրեւ գազիր մեռելոտի ի բաց ընկեցեալ: Ապաքէն զայդ կամիս, զի ծածկեացի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսչիր յորժամ յայտնեսցի, ապա զիտացես զելս կատարածի զորս» (էջ 8—9):

Վահրամի ապստամբութեան մասին չէ՞ հոս խօսքը եւ կամ Սորիկ Կայսր եւ Վահրամի դէմ խնդրուած կայսերական օգնութիւնն չէ՞ որ կ'ակնարկուի: Սասանեան տունը իւր գոյութեանն ի վեր չէր ապրած այն օրհասականք, որուն մէջ կը գտնուէր 590—595 տարիներուն. բայց մասնաւորապէս 590ին:

Եղիշէի այս ամբողջ հատուածը, ինչպէս ինծի կ'երեւայ, նախնարար կը գտնուէր վերջարանին մէջ, ուստի մասն էր է. յեղանակին. խմբագրէն հանուած եւ զետեղուած է Ա. յեղանակին մէջ, բոլորովին անյարմար տեղ մը:

Այս հնգամեայ շրջանի (590—595) դէպքերու վրայ, իբրեւ «Հայոց պատերազմի»

6 Կ'ակնարկէ Ես. Թ. 20. «Այր՝ եզրօր իւրում մի ողորմեցի. այլ խոտորեցի յաշակողմն իւր սոս քաղցի, եւ կերիցէ զձախակողմն իւր»: 7 Հմմտ. Մատթ. ԺԲ. 25. Մարկ. Գ. 24. Ղուկ. ԺԱ. 17: Նաեւ հոս ըստ իմաստին է միայն կոռնիս:

պատմութեան ուրուագծէն դուրս դիպուածներու վրայ չէ ուղած Եղիշէ խօսիլ երկարադոյնս: Որովհետեւ անձանօթ է տակաւին իրեն Սոսրով Բ. Պարուէզի 2. տարւոյն (596) խոստացուած վերագարձն հայ նախարարներու երկրորդ մասին, պիտի հետեւցընենք, թէ Եղիշէի Պատմութեան սկզբնադիրը աւարտած է 595ին:

Կ'երեւայ թէ մտադրութիւն ունէր պատմագիրը նախընթաց հնգամեայ շրջանին եւ յաջորդ տարիներու մասին ուրիշ աշխատութեան մը մէջ վերագրուելու. այսպէս ենթադրել կու տայ նախադասութիւնս. «բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի» (155): Թէ ի դուրս հանէ՞ց իր մտադրութիւնը, չեմ կրնար ըսել ստուգութեամբ (Հմմտ. § 19):

Հոս կը դարձնէ Եղիշէ խօսքը Հայոց աշխարհի Տիկնանց վրայ, գովելու անոնց ստաքինութիւնը:

Այս վերջարանութիւնը թէ սկզբնադրին կը պատկանի, յայտնի կը տեսնուի հետեւեալ նախադասութեանն. «զկարգեալ ոռճիկ նոցա (կանանց նախարարացն) յարբունուտ ամ յամէ՛ թոշակ առնէին եւ տային տանել նոցա ի միւթարութիւն»: Անշուշտ այս «ոռճիկն յարբունուտ» էին ստանար ապստամբ նախարարներու կանայք Տիրորնի արքունիքէն: Եղիշէ ողբացած էր քիչ յառաջ հայ տիկիներու կրած զրկանքներու վրայ. «Անկան կործանեցան ապարանք նոցա... Աչօք իւրեանց տեսին գլխաշտակութիւն արարոց, եւ ախանջօք իւրեանց լուան զվիշտ շարճարանաց սիրելեաց իւրեանց. առան գանձք իւրեանց յարբունիս. եւ ոչ մնացին ամենեւին գարդէ երեսաց իւրեանց» (156): Այս յաջողակութիւնն եւ յարբունիս գրաւումը առանց տարակուսի Պարսիկներէն տեղի ունեցաւ: Ենթադրե՞նք թէ անոնք ապա փոխարէն՝ ոռճիկ կապեցին թշնամի նախարարներու տիկնանց: Այս անհեղեղ պիտի լուրի անշուշտ:

Ուստի կ'ակնարկուի հոն այն «յարբունուտ ոռճիկը», զոր նախարարներու կանայք, որոնք փոխտեսայ եկած էին Կ. Պոլիս, կը ստանային Կայսեր կողմանէ ամ յամէ, ինչպէս Յովհ. Եփեսացի կը պատմէ (տե՛ս վարը, § 18): Այս հատուածին մէջ ուշագրաւ է եւ այն պարագան, որ տիկնայք Հայոց աշխարհին իրենց ապարանքներէն հեռու կը գտնուին, ուստի օտարութեան մէջ: Այն

ՍԵՊԱԳՐԱԿԱՆՔ

ՀԱԹԵՐ ԵՒ ՈՒՐԱՐՏԵԱՆՔ

ՄԵՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն):

աշխարհը, որուն երկնքի տակ կ'ապրէին այժմ, քրիստոնեայ աշխարհ էր. ունէին ազօթից տուն. «հանապաղ բոկ եւ հետի երթային ի տունս աղօթից». «բնագրօք՝ յիշատակեցան նոքա (նախարարք). եւ ոչ մի տօնք տարեկանաց ոչ ամիմ գնասա ի հեռատանէ» եւ այլն (էջ 156—158):

Կայսերական մայրաքաղաքն էր որ ամփոփած էր իւր ծոցը այդ թախծեալները:

Թէ անոնք Կ. Պոլիս կը գտնուէին, բացայայտ կը շնչեն նաեւ հետեւեալ սողերը, ուր կ'ըսուի. «Ոչ եւս սովորեցին (կանայք) հարցանել զեկեալ ոք ի հեռատանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք ազօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն (ամուսինք իւրեանց)՝ քաջութեամբ ի նմին կատարեցին ի երկնաւոր սիրովն» (158): Այս իղձքը համապատասխան էին այն խնդրուածքին, որ հասած էր իրենց հայրենիքէն. «Իբրեւ այս ամենայն աշողութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ... եւ զոյն զայս ամենայն այցելութիւնս Աստուծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երեւցաւ, գրեցին սուրբ եպիսկոպոսունքն եւ ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցոյն՝ (= Կայսեր եւ այն հայերուն, որոնք հաւաքուած էին Կ. Պոլիս), զի եւ նոքա ազօթս առնելով խնդրեցեն յԱստուծոյ, որպէս սկսաքս՝ ի նմին եւ կատարեցուք» (62):

Այսչափ առ այժմ Ա.—Ը. յեղանակներու բովանդակութեան մասին հարեանցիկ ակնարկով: «Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի»:

(Շարունակիդի): 3. Ն. ԱՅՈՒՆԵԱՆ



8 Այս ինքն «որոց յիշատակարանք ընդ անուանս վկայեցն սրբոց պատմեալ քարոզեցան», ինչպէս պիտի ըսէր Չապար Փարպեցի (տես իր արտայայտութիւնն էջ 5): Բնագիրք բառիս մասին՝ Հմմտ. Գաթրճեան-Տաշեան, Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, Վիեննա 1897, էջ 102, ծան. 3: Երբ կը կարդանք Եղիշէի է. յեղանակին մէջ (109) թէ «Ոչ յիշեցաւ անուն նորա (Վասակայ) ի մէջ սրբոց եւ ոչ մատեալ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցոյն», նոյն միտքն է որ կը կրկնուի, ապահովապէս Վ. Փարպեցոյ ազդեցութեան տակ, խմբագրէն: 9 Հմմտ. եւ «Լուան (կանայք նախարարաց) աւերիս ի հեռատանէ եւ փառաւորեցին զԱստուած ի բարձունս (157):

Ինչպէս է թէ նոյն զիտանակները Յ. Կարստ յարակից բազմաթիւ խնդիրներ նկատողութեան առած ըլլայ իւր միւս երկերուն մէջ ալ՝ ընդհանրապէս նոյն ոճով, եւ նոյն կերպով մեկնելով՝ ուր իրեն յարմար երեւայ՝ նաեւ զանազան ազգաց անուններն, մանաւանդ, որոնք յոգնակի ձեւով կը գործածուին: Այսպէս իւր «Ալարոզացիք եւ Նախարասկեր» գրութեան մէջ նոյն կերպով խօսած էր վերջ յիշուած անուանակոչութեանց մասին<sup>48</sup>: Բայց հոս միւս կողմանէ կ'ըսուի թէ «Վիրք» նշանակէ Վրաստանը «բառին ընդարձակագոյն իմաստով», ուստի նաեւ Ս. Գրոց Երբեր ժողովուրդը՝ ինքն եւս, եւ որովհետեւ թաղմտական մեկնիչներն ալ Իսրայէլի տանն սոսմերու գերութեան արտաբայութիւնը Aphriqā կը կոչեն, մինչդեռ իրականին էր, կ'ըսէ, Մարաստան (—միայն թէ իւր կարծեօք՝ Ուրմիոյ լճի եւ Կասպից ծովու եւ Կուր գետոյ միջեւ եղած աշխարհը —) ուստի այս Aphriqā անունը պահած ըլլայ Հիւրկանիս անունը, «Hyrc-ania, երանեան Vehirkana, հայ «Վիրք» (Վրաստան՝ յորժորջանաց ընդարձակագոյն մտօք)»<sup>49</sup>: — Նկատենք թէ Հիւրկանիոյ անուան հետ որեւէ կապ չունի հայ Վիրք, որովհետեւ անոր համապատասխանողն է հայ Վրկան(ք): Եւ եթէ որեւէ կերպով շփոթութիւն մ'եղած է՝ անուանց նմանութեան կամ այլ պատճառաւ, այդպիսի պարագայ մը գոյութեան պատճառ չունի յինքեան Վրկան եւ Վիրք անուանց համար: Բայ աստի արդէն Մարկուարտ կարծենք լաւ մեկնած էր այն կէտը թէ ինչպէս հին մասնադիրներէն ոմանք (Յովսէպոս եւս) Hyrc-

48 J. Karst, Alarodiens et Proto-Basques. Contribution à l'ethnologie comparée des peuples Asiatiques et Liby-Hespériens. Vienne 1928, pp. VIII + 136. յատկապէս էջ 63—100, էւն: 49 Հմմտ. անդ, էջ 66—67, 72—73, 94 էւն: — Փոքրիկա ալ, որ ի հարկէ «Նախափոխազգացոց» աշխարհն է եւ «գրեթէ հոմանիշ նախախարբու հետ», կրկին ըլլայ. մին՝ «Փոքրիկա Ասիային (asiatique) հիւրկանիս, Փոքր-Ասիոյ Փոքրիկա», եւ միւր՝ Փոքրիկա Արամէական-Միջագետական. որ կը պարունակէր ինչպէս Կորդուք, նոյնպէս նախահայերէն կամ Արբահամեանց աշխարհը եւս (անդ, էջ 71—72):